



# 2021

## ՏԱՐԵԳԻՐ ANNUAL REPORT

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
ARMENIAN RED CROSS SOCIETY

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԵՎ  
ԿԱՐՄԻՐ ՄԱՅԻԿԻ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՇԱՐԺՄԱՆ  
ՅԻՄՆԱՐԱՐ  
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

## ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժումը, ծնվելով մարտի դաշտում վիրավորներին ամանց խտրականության աջակցություն ցույց տալու ցանկությունից, իր միջազգային և ազգային իրավասությունների շրջանակներում ջանում է ամենուրեք կանխել և մեղմացնել մարդկային տառապանքը, ձգտում է պաշտպանել մարդու կյանքն ու առողջությունը, պահանջում է հարգել նրան:

## ԱՆԿՈՂՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Շարժումը ոչ մի խտրականություն չի դնում ազգության, ռասայի, կրոնական դավանանքների, դասակարգային կամ քաղաքական կարծիքների տեսանկյունից:

## ԶԵՂՈՔՈՒԹՅՈՒՆ

Համընդհանուր վստահությունը շարունակաբար վայելելու նպատակով Շարժումը ձեռնպահ է մնում հակամարտության կողմերից որևէ մեկին պաշտպանելուց և երբևէ քաղաքական, ռասայական, կրոնական կամ գաղափարական բնույթի հակամարտություններին միջամտելուց:

## ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

Շարժման անկախ է: Ազգային ընկերությունները, մարդասիրական ծառայություններ իրականացնելիս լինելով իրենց կառավարությունների օգնականները և ենթարկվելով իրենց համապատասխան երկրների օրենքներին, պետք է մշտապես պահպանեն իրենց անկախությունը, որպեսզի միշտ կարողանան գործել Շարժման սկզբունքներին համապատասխան:

## ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Իր գործունեության ընթացքում Շարժումը չի առաջնորդվում որևէ շահով: Շարժման ծրագրերի շրջանակներում կատարվող գործը պետք է արվի բացառապես անշահախնդիր՝ մարդասիրական նպատակներին նվիրվածությամբ:

## ԵԶԱԿԻՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր երկրում կարող է գործել Կարմիր խաչի կամ Կարմիր մահիկի միայն մեկ ընկերություն:

## ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժումը, որտեղ բոլոր ընկերություններն ունեն հավասար իրավունքներ և պարտավոր են օգնել իրար, համընդհանուր է:



Արդեն 100 տարուց ավելի է Հայկական Կարմիր խաչի ղևկերությունը շարունակում է իրականացնել իր մարդասիրական առաքելությունը՝ կանգնելով ամենախոցելիների կողքին՝ օգնության ձեռք մեկնելով Նրանց, ովքեր ունեն դրա կարիքը:

Այսօր, երբ աշխարհը ցնցվում է ճգնաժամերից, մարդասիրական կազմակերպությունների աշխատանքն առավել քան կարևոր է, որպեսզի ծայրահեղ կարիքի մեջ հայտնված միլիոնավոր մարդիկ միայնակ չմնան իրենց դժվարությունների հետ:

Մեր անձնակազմն ու կամավորները օր ու գիշեր աշխատել են՝ հասնելով նույնիսկ ամենահեռավոր համայնքներ և ջանք չեն խնայել՝ ի բարօրություն մեր շահառուների: Անցյալ տարի՝ մեր ծրագրերի ընդլայնմանը զուգահեռ, գրեթե կրկնապատկվել է նաև կամավորների թիվը: Դա նշանակում է, որ ՀԿԽԸ ակտիվ գործունեության շնորհիվ Կարմիր խաչի մարդասիրական գաղափարները տարածվում են և արձագանք գտնում մեր երիտասարդության շրջանում: Նրանց նվիրումը մեզ ուժ է տալիս և հնարավորություն՝ իրագործելու այսչափ լայնածավալ և բազմաբնույթ ծրագրեր:

Ամփոփելով մեր մեկ տարվա գործունեությունը՝ մենք վերահաստատում ենք մեր պատրաստակամությունը շարունակելու զարգացնել մեր կարողությունները և ներգրավել նորանոր ռեսուրսներ՝ մեր շահառուների մարդասիրական կարիքներին հնարավորինս արձագանքելու համար:

For more than 100 years, the Armenian Red Cross Society has carried out its humanitarian mission, standing by the most vulnerable, extending a helping hand to those who need it.

Nowadays when the world is shaken by crises, the work of humanitarian organizations is more than important so that millions of people in dire need do not have to face their difficulties alone.

Our staff and volunteers have spared no effort to reach even the most remote communities for the benefit of our beneficiaries.

Last year, as our programs expanded, so did the number of volunteers. Due to the hard work the ARCS carried out, the humanitarian ideas of the Red Cross are spreading and resonating with the youth. Their commitment enables us to carry out large-scale and multifaceted projects.

As a summary of the year's activities, we reaffirm our willingness to continue to develop our capacities and attract new resources to respond as much as possible to the humanitarian needs of our beneficiaries.

**Նախագահ**  
**Մխիթար Մնացականյան**  
**President**  
**Mkhitar Mnatsakanyan**



2021 թվականը ծանր տարի էր մեր երկրի և ժողովրդի համար, ինչն անմիջական ազդեցություն ունեցավ նաև Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) գործունեության ծավալների և բնույթի վրա:

Դեռևս 2020 թվականին՝ համավարակով պայմանավորված, Հայկական Կարմիր խաչի ընկերությունն ընդլայնել էր իր գործունեության ծավալները՝ գրեթե կրկնապատկելով իրականացվող ծրագրերի, ներգրավված պրոֆեսիոնալ անձնակազմի և կամավորների թիվը:

2020 թվականի վերջին մենք ունեցանք տեղահանված անձանց մեծ ներհոսք՝ մոտ 90 հազար մարդ, որոնց մարդասիրական կարիքներին արձագանքելու համար ներգրավեցինք ահռելի ռեսուրսներ: Հայկական Կարմիր խաչի ընկերության միջազգային և տեղական գործընկերների վստահության և աջակցության շնորհիվ կարողացել ենք տրամադրել 11 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք բազմաբնույթ մարդասիրական օգնություն՝ սնունդ, հագուստ, առաջին անհրաժեշտության իրեր, քայլակներ, սայլակներ, հոգեբանական աջակցություն, կանխիկ աջակցություն և այլն:

Առաջին արձագանքին հաջորդեց միջնաժամկետ և երկարաժամկետ ինտեգրման ծրագրերի մշակումը՝ ՀՀ-ում մնացած մոտ 20 000 տեղահանված անձանց աջակցությունը շարունակելու համար: Այդ ընթացքում մեծ կարևորություն ենք տվել սահմանամերձ դարձած համայնքների դիմակայունության բարձրացմանն ուղղված բաղադրիչներին:

Քովիդ-19 համավարակը դեռևս շարունակում էր կյանքեր խլել և խոչընդոտել ակտիվ հասարակական կյանքին: 2021 թվականին շարունակեցինք համավարակի արձագանքի մեր ծրագրերը՝ ավելի քան 37 000 հազար մարդու տրամադրելով սնունդ, հիգիենիկ պարագաներ, աջակցելով տնային տնտեսություններին, պլանշետներ տրամադրելով միայնակ տարեցներին՝ հարազատների հետ կապ պահելու և երեխաներին՝ կրթական գործընթացից չկտրվելու համար, փոխհատուցելով առավել խոցելիների կոմունալ ծախսերը:

Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևանում Քովիդ - 19 վարակի դեմ պատվաստումների իրականացմանն աջակցություն ցուցաբերելու, կամավորների կողմից հանրության իրազեկման աշխատանքների համար՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Պատվոգիր ստացավ Առողջապահության նախարարության կողմից:

Այս երկու խոշոր ճգնաժամերի արձագանքին զուգահեռ, շարունակել ենք մեր գործունեությունը ՀԿԽԸ ռազմավարական ուղղություններով: Ընդհանուր առմամբ 2021 թվականին ՀԿԽԸ տարբեր ծրագրերում ներգրավված է եղել մոտ 800 000 շահառու, տրամադրվել են ավելի քան 300 000 կտոր/միավոր պարենային և ոչ պարենային ապրանքներ, ավելի քան 2 միլիարդ ՀՀ դրամի կանխիկ աջակցություն, իրականացվել է համայնքների դիմակայունության բարձրացման մոտ 30 ծրագիր, հոգեբանական աջակցություն է տրամադրվել ավելի քան 20 000 անձի:

Անցյալ տարվա ընթացքում էլ առավել խորացել է համագործակցությունը ՀՀ Կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, իսկ ՀԿԽԸ հեղինակության, որակյալ ծառայությունների մատուցման և թափանցիկ գործելաճի շնորհիվ վայելում ենք մեր միջազգային գործընկերների և դոնորների վստահությունը:

Տարվա մեծ ձեռքբերումներից կարող ենք համարել Տավուշի մարզում Դիմակայունության կենտրոնի ստեղծումը, որը եզակի է իր կառուցվածքով և հավակնում է այդպիսին դառնալ նաև տարածաշրջանային մակարդակում: Լուրջ առաջընթաց ենք գրանցել նաև Առաջին օգնության և ոչ-ֆորմալ կրթության ուղղություններով՝ սերտ համագործակցություն հաստատելով ոլորտային գերատեսչությունների հետ:

Կազմակերպության զարգացման ուղղությամբ գործադրած մեր ջանքերն արդեն տալիս են իրենց արդյունքները՝ հինգ մարզերում ունենք հիմնովին վերանորոգված և կահավորված գրասենյակներ, ակտիվացել է համայնքային մասնաճյուղերի գործունեությունը, իսկ մեր կամավորների թիվը հասել է 5096-ի:

Անցյալ տարի ավարտեցինք ՀԿԽԸ 2022-2026 Ռազմավարությունը՝ նախանշելով առաջիկա հինգ տարվա գործողությունների պլանը:

Մենք շնորհակալ ենք մեր բոլոր կամավորներին, գործընկերներին և նվիրատուներին՝ Հայկական Կարմիր խաչի ընկերության մարդասիրական առաքելությանն աջակցելու և մարդասիրական արժեքների տարածմանը նպաստելու համար:

The year of 2021 was a difficult one for our country and people, and it had a direct impact on the scope and nature of the activities of the Armenian Red Cross Society.

Back in 2020, due to the pandemic, the Armenian Red Cross Society expanded its activities, almost doubling the number of programs, professional staff and volunteers.

Late in 2020 we had a large influx of displaced people, nearly 90,000, and we mobilized enormous resources to respond to their humanitarian needs. Thanks to the trust and support of the international and local partners of the Armenian Red Cross Society, we were able to provide multifaceted humanitarian aid, equivalent to 11 million USD - food, clothing, basic necessities, walkers, wheelchairs, psychological support, cash support, etc.

The first response was followed by the development of medium and long-term integration plans to carry on the support of nearly 20,000 displaced people remaining in RA. Meanwhile we have emphasized the component aimed at increasing the resilience of the bordering communities.

The Covid-19 pandemic continued to claim lives and disrupt daily activities. In 2021 we continued the pandemic response programs providing more than 37,000 people with food, hygiene items, supporting households, providing tablets to lonely elderly so that they stay in touch with their relatives and to children to carry on their education, compensating utility costs for the most vulnerable.

The Armenian Red Cross Society received an award from the Ministry of Health for assisting the vaccination process against Covid-19 in the regions and in Yerevan, and for public awareness activities carried out by our volunteers.

Amidst the responses to these 2 major crises, we have continued our activities in the strategic directions of the ARCS. In total, in 2021, about 800,000 beneficiaries were involved in various programs of the ARCS, more than 300,000 pieces/units of food and non-food items were provided, cash support of more than 2 billion AMD, about 30 programs for increasing the resistance of communities, more than 20,000 people received psychological support.

Over the past year, cooperation with the RA Government and local self-governing has developed further, and thanks to the reputation of the ARCS, the provision of quality services and transparent work style, we enjoy the trust of our international partners and donors.

Among the great achievements of the year, we can consider the creation of the Resilience Center in Tavush region, which is unique in its structure and aspires to become such at the regional level as well. We have also made serious progress in the directions of First Aid and non-formal education, establishing close cooperation with the sector departments.

Our efforts towards the organizational development are already yielding their fruit: we have thoroughly renovated and furnished branch offices in five regions, the work of regional branches has been set on an active course, and the number of our volunteers has reached 5096.

Last year we completed the 2022-2026 Strategy of the ARCS, outlining the action plan for the next five years.

We are grateful to all our volunteers, partners, donors and staff for supporting the humanitarian mission of the Armenian Red Cross Society and promoting humanitarian values.

**Գլխավոր քարտուղար  
Աննա Եղիազարյան**

**Secretary General  
Anna Yeghiazaryan**



© Nick Danziger

**Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, ըստ իր 2011-2020 թթ. ռազմավարության, առաջնորդվում է հետևյալ արժեքներով.**

**Մարդիկ**

Մենք զարգացնում ենք մարդկանց և համայնքների կարողությունները՝ գործելու հանդուրժող միջավայրում և գտնելու կայուն լուծումներ իրենց ամենաանհրաժեշտ և խոցելի կարիքները հոգալու համար:

**Ազնվություն**

Մենք աշխատում ենք համաձայն մեր հիմնարար սկզբունքների՝ թափանցիկ և պատասխանատու կերպով:

**Համագործակցություն**

Որպես Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման անդամ՝ մենք համագործակցում ենք կառավարության, ինչպես նաև այլ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, հարգելով մեր խորհրդանիշները և ներկայացված անկախությունը, անկողմնակալությունը և չեզոքությունը:

**Բազմազանություն**

Մենք հարգում ենք համայնքների և մեր կամավորների, անդամների և աշխատակիցների բազմազանությունը՝ հիմնվելով անխտրականության և մեր անկողմնակալության և համընդհանրության սկզբունքների վրա:

**Առաջնորդություն**

Մենք ցուցաբերում ենք առաջնորդություն և մեր աշխատանքում ձգտում ենք գերազանցության՝ ուշադրություն դարձնելով համայնքների և դրանց իրավունքներին, կարիքներին և խոցելիությանը:

**Նորարարություն**

Մենք ներշնչվում ենք մեր ժառանգած պատմությունից և ավանդույթից, սակայն միաժամանակ փորձում ենք գտնել ստեղծագործական, կայուն լուծումներ խնդիրներին, որոնք վտանգում են փոփոխվող աշխարհում ապրող մարդկանց բարեկեցությունը և արժանապատվությունը:

**ՄԵՆՔ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆՔ  
ՀԵՏԵՎՅԱԼ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ**

**Աղետների կառավարում  
Բնակչության տեղաշարժ  
Որոնում ծառայություն  
Առաջին օգնություն  
Սոցիալ-առողջապահություն  
Մարդասիրական արժեքների տարածում  
Միջազգային համագործակցություն  
Երիտասարդական, կամավորություն և  
անդամակցություն  
Կազմակերպության զարգացում  
Ռեսուրսների մոբիլիզացում**

# ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ



Աղետների կառավարման (ԱԿ) ուղղության հիմնական նպատակն է նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը և բարձրացնել դիմակայունությունը բնական ու տեխնածին աղետների նկատմամբ՝ համայնքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման միջոցով և հզորացնել Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) աղետներիև նախապատրաստման և արձագանքման (ԱՆԱ) համակարգը:





### **Կամավոր կարողությունների միջոցով բնակչության պաշտպանության համակարգերի ամրապնդում**

Եվրոպական միության մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության վարչություն, Ավստրիական գարգացման համագործակցության, Ավստրիական Կարմիր խաչի կողմից ֆինանսավորվող ծրագիրը մեկնարկել է 2020թ. -ի փետրվարին և շարունակվելու է մինչև 2022 թվականի հունիսը: Այն նպատակ ունի նպաստել Հայաստանի մարզերում կամավոր կարողությունների միջոցով բնակչության պաշտպանության համակարգերի ամրապնդմանը: Ծրագրի թիրախ խմբերն են հանդիսանում ՀՀ Կոտայքի մարզի Գառնի և ՀՀ Լոռու մարզի Մեծ Պառնի համայնքների և հարակից բնակավայրերի ազգաբնակչությունը:

**Կոտայքի մարզի Գառնի և Լոռու մարզի  
Շիրակամուտ համայնքներում ստեղծվել,  
ուսուցանվել և տեխնիկապես հագեցվել են  
Կամավոր հրշեջ-փրկարարների թիմեր**



### **Ծրագրի առջև դրված խնդիրներն են՝**

1. Բնակչության պաշտպանության համակարգերում կամավորների ինտեգրման փորձի և հաջողված պատմությունների վերաբերյալ հետազոտության իրականացում և մոդելների մշակում:
2. Հայաստանում բնակչության պաշտպանության կամավորական թիմերի ձևավորում և կարողությունների զարգացում:
3. Բնակչության պաշտպանության ոլորտում միջոլորտային համագործակցության զարգացում և համայնքներում համապատասխան ինքնաբավ համակարգերի ներդրում:
4. Բնակչության պաշտպանության կամավորների ընդգրկման և զարգացման արդյունքահեն մոդելի մշակում, որը հետագայում հնարավոր է կիրառել բնակչության պաշտպանության ոլորտում կամավորների զարգացման նպատակով:

### **Աջակցություն Հայաստանում Կորոնավիրուսային համավարակի դեմ պայքարում ԿԻՄՖ պատրաստվածության և արձագանքման գործողություններին**

Ծրագիրը մեկնարկել է 2021 թվականի ապրիլին: Ծրագիրն իրականացվում է ՀՀ 6 մարզերում՝ Տավուշ, Լոռի, Շիրակ, Կոտայք, Վայոց ձոր, Արարատ: Այն ֆինանսավորվում է Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիայի կողմից: Ծրագրի նպատակն է աջակցել համավարակի հետևանքով մահացության դեպքերի և հիվանդության տարածման տեմպերի նվազմանը՝ միաժամանակ պաշտպանելով առավել խոցելի խմբերի անվտանգությունը, արժանապատվությունը և բարեկեցությունը: Այս նպատակին հասնելու համար ՀԿԻՄՖ օգնել է թիրախային համայնքներին հասկանալ վարակի կանխարգելման պրակտիկան և զսպել դրա փոխանցումը և տարածումը, ինչպես նաև աջակցել համավարակի հետևանքով սոցիալ-հոգեբանական խնդիրների հաղթահարմանը:



**Ծրագիրն իրականացվում է չորս հիմնական ուղղություններով.**

1. Հոգեկան առողջություն և հոգեբանական աջակցություն
2. Ռիսկերի գնահատում և համայնքի ներգրավվածություն
3. Ոչ պարենային՝ հիգիենիկ պարագաների տրամադրում
4. Հեռավար ուսուցում և դիմակայունության խթանում

**Ծրագրի արդյունքում՝**

- 400 պլանշետ է տրամադրվել միայնակ անձանց և տարեցների՝ սոցիալականացման և համավարակի ընթացքում մեկուսացմամբ պայմանավորված խնդիրների լուծման նպատակով
- Հիգիենիկ պարագաներ են տրամադրվել համավարակից տուժած, խոցելի 3000 անձանց
- 85 ուսուցիչ վերապատրաստվել են «Երեխաներին տրամադրվող հոգեբանական առաջին օգնություն» թեմայով
- Հոգեբանական առաջին օգնության վերաբերյալ վերապատրաստումներ են անցել 24 կամավոր, ովքեր իրենց հերթին կրթական և մշակութային ծրագրեր են իրականացրել շուրջ 400 դպրոցահասակ, համավարակից տուժած և Լեռնային Ղարաբաղից տեղահանված երեխաների հետ
- 400 դպրոցահասակ, համավարակից տուժած և Լեռնային Ղարաբաղից տեղահանված երեխաների տրամադրվել են պլանշետներ՝ հեռավար ուսուցման աջակցության նպատակով:

Բացի այդ ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀԿԽԸ Թեժ գծի սպասարկում, որի շրջանակներում սպասարկվել է ավելի քան 4000 հեռախոսազանգ:



### **Աղբարկղերի և աղբահան մեքենայի տրամադրման նախագիծ՝ Իջևան քաղաքում թափոնների կառավարման կարողությունները զարգացնելու նպատակով**

ՀԿԽԸ-ի կողմից իրականացվող «Իջևան քաղաքում թափոնների կառավարման կարողությունները բարձրացնելու համար աղբահավաք մեքենայի և աղբամանների տրամադրման» ծրագրի շրջանակներում Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Տավուշի մարզի Իջևան քաղաքին հանձնեց 240 աղբաման և համապատասխան աղբահավաք մեքենա: Ծրագիրն իրականացվել է Ճապոնիայի կառավարության ֆինանսավորմամբ:

Նվիրատվության համաձայնագիրը ստորագրեցին Իջևանի քաղաքապետի Ժ.Ա. Արթուր Ճաղարյանը և ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանը:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պրն. Մասանորի Ֆուկուչիման, ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը:

Իջևանի քաղաքապետարանն ապահովելու է աղբի հավաքման գործընթացի հետագա տեխնիկական սպասարկումը:

Ծրագրի շրջանակներում օգոստոսի 30-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության Տավուշի Մարզային մասնաճյուղի 40 կամավորներ Իջևանում իրականացրեցին շրջակա միջավայրի մաքրության վերաբերյալ իրազեկում և շաբաթօրյակ՝ աղբից մաքրելով քաղաքի տարբեր բանուկ հատվածներ:

2020 թվականին Իջևանի քաղաքապետարանը դիմել էր ՀԿԽԸ-ին՝ աղբի կառավարման բարելավմանն աջակցելու համար: Համայնքի դիմակայունության բարձրացմանն ուղղված «Փոխենք մտածելակերպը, մաքրենք քաղաքը» ծրագրի միջոցով աղբի հավաքման համակարգի կատարելագործումը կնպաստի բնապահպանական իրավիճակի բարելավմանը և աղետների ռիսկի նվազեցմանը: 90-ականներին Իջևանով անցնող Աղստև գետի ջրերը աղտոտվում էին Դիլիջանի «Իմպուլս» գործարանի և Իջևանի Գորգերի գործարանի թափոններով: Այժմ գետը աղտոտող արդյունաբերական ձեռնարկություններ չկան, սակայն անհրաժեշտություն կա բարելավել աղբահանության գործընթացը, որպեսզի կենցաղային թափոնները չաղտոտեն ու չխցանեն գետը՝ ստեղծելով ջրհեղեղի ռիսկ:

## Կորոնավիրուսային համավարակին արձագանք Հայաստանում-4 ծրագրի շրջանակներում Տավուշի մարզում աղետների դիմակայունության կենտրոնի վերանորոգում

ՀՀ Տավուշի մարզի իջևան քաղաքում տեղակայված Դիմակայունության կենտրոնը ստեղծվել է աղետների ռիսկի կանխարգելմանը և արձագանքման, ինչպես նաև անվտանգության և ապահովության միջավայրի ամրապնդման խթանելու նպատակով: Այն միտված է ՀԿԽԸ ռազմավարական ուղղությունների կատարելագործմանը, մասնավորապես աղետների, արտակարգ իրավիճակների, հակամարտությունների կառավարման և համակարգման բոլոր փուլերում: Կենտրոնի միջոցով գործելու են հետևյալ կառույցները, որոնք իրենց հերթին նպաստելու են ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի զարգացմանը:

- Արագ արձագանքման ռեսուրսային կենտրոն
- Աղետների ռիսկի և կլիմայի փոփոխության կառավարման, աղապտացման կենտրոն (ներառյալ քարտեզագրում, ռիսկերի գնահատում, տեղեկատվական/ուսումնական նյութեր)
- Զաղաքացիական պաշտպանության աջակցման կենտրոն
- Անձեռնմխելի գույք՝ նախատեսված արտակարգ իրավիճակների համար
- Որոնում ծառայություն
- Առաջին օգնության դասընթացների կենտրոն
- Հանրային իրազեկման կրթական կենտրոն
- Սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոն

Սույն ծրագրի շրջանակներում իրականացվել է Դիմակայունության կենտրոնի կահավորում և տեխնիկական հագեցում՝ դիմակայունության կարողությունների կատարելագործման նպատակով: Ծրագիրը մեկնարկել է 2021 թվականի ապրիլին և ֆինանսավորվել է Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիայի կողմից:



**400**

պլանշետ միայնակ տարեցների



**250**

աղբաման և 1 աղբահավաք մեքենա



**11 000**

ականների վտանգի մասին իրազեկված մարդ

## Համավարակի ընթացքում աջակիցների համար սոցիալ-հոգեբանական աջակցության և հոգեկան առողջության վերաբերյալ իրազեկման և գործընկերության ավելացում

COVID-19 համաճարակն ի հայտ է բերել Հոգեկան առողջության և սոցիալ-հոգեբանական աջակցության (MHPSS) կարևորությունը և անհրաժեշտությունը համաճարակի ժամանակ օգնություն տրամադրողներին: Այս ծրագրի շրջանակներում բացահայտվել են համաճարակի ժամանակ օգնություն տրամադրողների կարիքները, նրանց վրա համավարակի հոգեբանական ազդեցությունը:

Ծրագիրը մեկնարկել է 2021 թվականի փետրվարի 1-ին և ավարտվելու է 2022 թվականի հուլիս ամսին: Այն իրականացվում է ՀՀ բոլոր մարզերում՝ ֆինանսավորվելով Ավստրիական Կարմիր խաչի կողմից:

## Պայթուցիկ զինամթերքի վտանգի իրազեկման ծրագիր

Ծրագիրը մեկնարկել է 2021 թվականի հունվարին ՅՈՒՆԻՍԵՖի աջակցությամբ և ավարտվել է 2021 թվականի հուլիսին: Իրականացվել է Երևանում և ՀՀ բոլոր մարզերում:

Ծրագիրը նպատակ ուներ վտանգի իրազեկման միջոցառումների, այդ թվում՝ անմիջական հաղորդակցության և հանրային արշավների իրականացման միջոցով նվազեցնել պայթուցիկ զինամթերքի և ականների վտանգի ռիսկը:

## Ծրագրի առջև դրված խնդիրներն են՝

- ծրագիրը հասանելի դարձնել հակամարտության արդյունքում տուժած նվազագույնը 11. 000 անձանց համար,
- նպաստել հակամարտության արդյունքում տուժած երեխաների համար ապահով կրթական միջավայրերի հասանելիության բարձրացմանը
- կոլեկտիվ ապաստարաններում ստեղծել ժամանակավոր ապահով կրթական տարածքներ
- մշակել վտանգի իրազեկման համար նախատեսված կրթական նյութեր
- ուսուցանել ուսուցիչներին և ՅԿԽԸ կամավոր-հրահանգիչներին, ովքեր իրենց հերթին որակյալ կերպով գիտելիքները կփոխանցեն հակամարտության արդյունքում տուժած երեխաներին, ծնողներին և խնամակալներին
- իրականացնել պատերազմի պայթուցիկ մնացորդների և ականների վտանգի իրազեկման դասընթացներ հակամարտության արդյունքում տուժած երեխաների և նրանց խնամակալների համար:

## Ծրագրի շահառուներն են հանդիսացել նվազագույնը 11000 մարդ՝ ընդգրկելով հետևյալ խմբերը.

- հակամարտության արդյունքում տուժած երեխաներ,
- հակամարտության արդյունքում տուժած երեխաների ծնողներ և խնամատարներ,
- հյուրընկալող համայնքների դպրոցների ուսուցիչներ,
- ՅԿԽԸ կամավորներ և հրահանգիչներ:

**ՅԿԽԸ Աղետներին արձագանքման թիմերը հերթապահություն են իրականացրել Սևանի հանրային լողափում օգոստոսի 6-ից մինչև սեպտեմբերի 5-ը, որի ընթացքում ավելի քան 70 քաղաքացի անհրաժեշտ աջակցություն է ստացել տարբեր վնասվածքների դեպքերում:**

## Հայկական Կարմիր խաչի ընկերության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գործընկերություն, ՅԿԽԸ աղետների արձագանքման կարողությունների ամրապնդում

Ծրագրի հիմնական նպատակն է ՅԿԽԸ աղետների նախապատրաստման և արձագանքման կարողությունների հզորացումը՝ Աղետներին արձագանքման թիմերի և Արտակարգ իրավիճակների նախարարության մարզային փրկարարական վարչությունների միջև սերտ համագործակցության, ինչպես նաև Սևանում և Գորիսում Աղետներին արձագանքման թիմերի տեղակայման միջոցով: Այն նպատակ ուներ նաև նպաստել արտակարգ իրավիճակների ժամանակ Շարժման գործընկերների հետ համագործակցության բարելավմանը ՅԿԽԸ «Աղետների արձագանքման նախնական պլան»-ի վերանայման միջոցով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք աշխատաժողովներ և վարժանքներ:

- 2021 թվականի հունիսի 16-ին ՅԿԽԸ Վայոց ձորի մարզային մասնաճյուղում իրականացվել է վարժանք Արագ արձագանքման թիմերի և ԱԻՆ-ի մարզային փրկարարական վարչության անձնակազմի հետ համատեղ:
- Հուլիսի 21-ին մեկ այլ վարժանք է իրականացվել Սյունիքի մարզում Սյունիքի մարզային փրկարարական վարչության և ՅԿԽԸ Սյունիքի մարզային մասնաճյուղի, ՅԿԽԸ Արագ արձագանքման թիմերի կամավորների հետ համատեղ, որի ընթացքում կամավորները պետք է արձագանքեին Կապանում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքներին՝

ցուցաբերելով որոնողա-փրկարարական, առաջին օգնության և հոգեբանական առաջին օգնության իրենց գիտելիքները և հմտությունները:

- Օգոստոսի 16-ին Սյունիքի մարզային փրկարարական վարչության և ՀԿԽԸ Սյունիքի մարզային մասնաճյուղի համագործակցությամբ իրականացվել է մեկ այլ վարժանք, որի ընթացքում կամավորները արձագանքել են անսպասելի ուժեղ պայթյունին և դրա հետևանքներին:
- Ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ Արագ արձագանքման թիմերը հերթապահություն են իրականացրել Սևանի հանրային լողափում օգոստոսի 6-ից մինչև սեպտեմբերի 5-ը, որի ընթացքում ավելի քան 70 քաղաքացի անհրաժեշտ աջակցություն են ստացել տարբեր պատճառներով պայմանավորված վնասվածքների դեպքերում:
- Հոկտեմբեր ամսին Տավուշի մարզում ԱԻՆ-ի հետ համատեղ իրականացվել է Միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի /INSARAG/ ամսական վարժանքը: Վարժանքին մասնակցել են Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիայի, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչները, ինչպես նաև՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենը: Ընդհանուր առմամբ վարժանքին ներգրավված են եղել ՀԿԽԸ Արագ արձագանքման թիմերի 24 կամավոր:



# ԲՆԱԿԳՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ



Հայկական Կարմիր խաչի ընկերությունը  
Բնակչության տեղաշարժի կառավարման  
ուղղությամբ իր հանձնառությունների  
շրջանակներում շարունակել է  
գործունեությունը՝ ի նպաստ փախստական,  
փախստականի նման կարգավիճակ  
ունեցող, ապաստան հայցող, այլ  
տեղաշարժված անձանց իրավունքների  
պաշտպանության, հումանիտար  
աջակցության և ինտեգրման:





Մեծածավալ աջակցություն է տրամադրվել 14 համայնքահեն կազմակերպության, որոնք ներառված են եղել ԼՂ-ից տեղահանված անձանց կարիքների արձագանքման գործում: Համայնքների և համայնքային կամավորների նախաձեռնությունների ֆինանսավորման շրջանակներում իրականացվել են 25 համայնքային զարգացման ծրագրեր՝ խաղահրապարակների կառուցում, կացարանի վերանորոգում, գրադարանի, մեծահասակների սենյակի կահավորում, բացօթյա կինոթատրոնի կառուցում, թեքահարթակների տեղադրում, ավտոբուսի կանգառների նորոգում, սպորտդպրոցների գույքի տրամադրում, այգիների և փողոցների բարեկարգում, գորգագործական խմբակի աջակցություն

2021թ. ՀԿԽԸ-ն շարունակել է լայնածավալ աջակցություն ցուցաբերել 2020թ. Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով Հայաստան տեղափոխված ընտանիքներին՝ սերտ համագործակցելով պետական և ոչ պետական գործընկերների և կառույցների հետ: Ընթացիկ աջակցությունը զուգորդվել է ռեսուրսների և ֆոնդերի շարունակական հայթայթման և կազմակերպության և գործընկեր կազմակերպությունների անձնակազմի կարողությունների զարգացման գործընթացներով: Աջակցության ծրագրերի հիմքում ընկած են եղել կարիքների շարունակական գնահատման արդյունքները, պետության կողմից մատնանշված խնդիրների արձագանքման անհրաժեշտությունը, սոցիալական իրավիճակի վատթարացման կանխարգելման անհրաժեշտությունը, հատուկ պաշտպանության կարիք ունեցող դեպքերի համար մասնագիտական արձագանքի կազմակերպումը:



### Ամփոփվեց Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում (ԻՐԻՍ) ծրագիրը

Սեպտեմբերի 9-ին, Յուլիոյեյ Ինն հյուրանոցում տեղի ունեցավ Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ)՝ Ավստրիական Կարմիր խաչի, Հայկական կարիտասի, Սիրիահայերի հիմնախնդիրների համակարգման կենտրոն ՅԿ-ի և ՓՄՁ համագործակցության ասոցիացիա ՅԿ-ի հետ համագործակցությամբ հրավիրված ԵՄ կողմից ֆինանսավորված Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում (ԻՐԻՍ) ծրագրի ամփոփիչ համաժողովը, որին ներկա էին Հայաստանում ԵՄ դեսպան Ն. Գ. Անդրեա Վիկտորինը, Ավստրիական զարգացման գործակալության հայաստանյան գրասենյակի ղեկավար պրն. Կլաուս Կապպերը, այլ հյուրեր:

Համաժողովի ընթացքում ներկայացվեցին ծրագրի ձեռքբերումները, ինչպես նաև՝ Հայաստանում ոլորտի մարտահրավերների հնարավոր լուծումների առաջարկներ:

ԵՄ ԻՐԻՍ ծրագիրն իրականացվել է 2018 թվականի հուլիսից մինչև 2021 թվականի հուլիսը: Նպատակն էր բարելավել սիրիահայերի և տեղացիների սոցիալական և տնտեսական ինտեգրումը, հզորացնել Հայաստանում տնտեսական աճի ինստիտուցիոնալ կարողությունները: Այն բաղկացած էր չորս հիմնական բաղադրիչներից՝ Տնտեսական ինտեգրում, Բնակարանային պայմանների բարելավման աջակցություն, Իրազեկման ծառայություններ և Սոցիալական ներառում:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը 36 ամիսների ընթացքում գրանցել է հետևյալ արդյունքները.

- **270** ընտանիք ստացել է բնակվարձի աջակցություն,
- մշակվել է բնակարանային պայմանների բարելավման մոդել ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքների համար,
- **100** սիրիահայ և տեղացի ներգրավվել է վճարովի պրակտիկայի գործընթացում, որոնցից **77**-ն ընդունվել է աշխատանքի պրակտիկայից հետո

- **200** տարեց եռամսյակը մեկ ստացել է սննդի և հիգիենիկ պարագաներ փաթեթ,
- ստեղծվել է Հայկական Կարմիր խաչի ընկերության Հոգեբանական աջակցության կենտրոնը, որտեղ անհատական հոգեբանական աջակցություն է տրամադրվել **361**, խմբային՝ **735** երեխայի և մեծահասակի, Քովիդ-19 համավարակից և Ղարաբաղյան հակամարտության սրացումից տուժած ավելի քան **40 000** մարդու,
- **631** ուսուցիչ/գործընկեր/պետական կառավարման մարմինների աշխատակից մասնակցել է Հոգեբանական առաջին օգնության դասընթացի,
- կրթական ծրագրերում ներգրավվել են ավելի քան **9000** աշակերտ և ուսուցիչ,
- **430** երիտասարդ ներգրավվել է կարողությունների զարգացման և փոքր դրամաշնորհների տրամադրման ենթածրագրերում:

ՄԱԿ-ի փախստականների գործակալության, Եվրամիության և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսավորմամբ իրականացված ծրագրերն ուղղված են եղել տեղահանված անձանց համար ընդունելության պայմանների բարելավմանը, դեպի ՀՀ տարածք մուտքի ապահովմանը, տնտեսական և սոցիալ-մշակութային ինտեգրմանը, սոցիալական պաշտպանությանը և առաջնային կարիքների հրատապ արձագանքին, հոգեբանական վիճակի բարելավմանը, երեխաների պաշտպանության հատուկ դեպքերի վարմանը, գենդերով պայմանավորված բռնությունների բացահայտմանն ու կանխարգելմանը, «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում պայմանների բարելավմանը, պետական կառույցների և այլ համագործակից կազմակերպությունների կարողությունների զարգացմանը, ԼՂ-ից տեղահանված անձանց պաշտպանության մոնիթորինգի միջոցով կարիքների բացահայտմանը, սոցիալական դեպքի վարման միջոցով կարիքների արձագանքմանը, կացարանների և միջավայրի պայմանների բարելավմանը, համայնքային խաղաղ համակեցության ապահովմանը, համայնքների զարգացմանը և այլն:



**1372**

ծամ թարգմանություն



**176**

տնտեսապես ինտեգրված ընտանիք



**250**

իրագեցված ՄՄԾ աշխատակից

Ապաստան հայցողների և փախստականների համար իրականացվել է 10 տեղեկատվական հանդիպում տեղահանված անձանց իրավունքների, փախստականի կարգավիճակի տրամադրման ընթացակարգերի, սոցիալական ծառայությունների հասանելիության, աշխատանքի տեղավորման, ՄԻԱԿ-ՁԻԱԳ-ի և թրաֆիկինգի կանխարգելման և այլ թեմաներով: Ընդհանուր առմամբ 140 ապաստան հայցող և փախստական մասնակցել է նշված հանդիպումներին:

ՀՀ ԱԿԾ սահմանապահ զորքերի և անձնագրերի և վիզաների վարչության ներկայացուցիչների համար կազմակերպվել է 6 դասընթաց՝ 87 աշխատակցի մասնակցությամբ: 63 այց է իրականացվել սահմանային անցման ցամաքային կետեր և օդանավակայաններ: Շաբաթական մոնիթորինգ է իրականացվել ,Հատուկ կացարանն ՊՈԱԿ-ում, որտեղ կատարվել են վերանորոգումներ և տրամադրվել է անհրաժեշտ գույք:

ՀՀ ԱԾ սահմանապահ գործերի և անձնագրերի և վիզաների վարչության ներկայացուցիչների համար կազմակերպվել է 6 դասընթաց՝ 87 աշխատակցի մասնակցությամբ: 63 այց է իրականացվել սահմանային անցման ցամաքային կետեր և օդանավակայաններ: Շաբաթական մոնիթորինգ է իրականացվել «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում, որտեղ կատարվել են վերանորոգումներ և տրամադրվել է անհրաժեշտ գույք:

ՀԿԽԸ-ն 12 լեզուների տիրապետող 16 թարգմանիչների միջոցով ապահովել է 1372 ժամ և 515 էջ գրավոր թարգմանություն ապաստան հայցողների և փախստականների համար:  
Հոգեբանական 306 անհատական խորհրդատվություն է իրականացվել փախստականների և ապաստան հայցողների համար:

Փախստական երեխաների պաշտպանության և գենդերով պայմանավորված բռնությունների կանխարգելման աշխատանքային խմբերի 6 հանդիպում է կազմակերպվել տարվա ընթացքում: Երեխաների պաշտպանության հատուկ 38 դեպքի վարում է իրականացվել: 80 երեխա ստացել են կրթության հասանելիությունն ապահովող նյութական աջակցություն:  
Փախստական կանանց փոխաջակցման խմբի 10 հանդիպում է կազմակերպվել: ԱՄՅՆ Միասնական սոցիալական ծառայության 49 ստորաբաժանումների 250 ներկայացուցիչներ՝ սոցիալական աշխատողներ, ընդունարանի աշխատակիցներ և տարածքային կենտրոնների ղեկավարներ վերապատրաստվել են և իրազեկվել փախստականների իրավունքների վերաբերյալ 11 դասընթացների ընթացքում: Տնտեսական ինտեգրման աջակցություն է ստացել 176 ընտանիք՝ անասնապահության, կարի, մեքենաների վերանորոգման, խոհարարության, վարսահարդարման և այլ բազմաթիվ բնագավառներում գործունեություն ծավալելու և եկամուտ ստանալու նպատակով:  
80 ապաստան հայցող և փախստական մասնակցել է հայոց լեզվի դասընթացներին, իսկ 440-ը մասնակցել են կազմակերպված 22 մշակութային միջոցառումների:

2899 ընտանիքի հետ իրականացվել է պաշտպանության մոնիթորինգ, իսկ 507 ընտանիք ներառվել է դեպքի վարման գործընթացում:  
96 այցելություն է իրականացվել Կիլիկիա ավտոկայան՝ ԼԴ-ից տեղահանված անձանց վերադարձի մոնիթորինգի նպատակով:  
ԼԴ-ից տեղահանված 1038 անձանց համար կազմակերպվել են 55 խմբային հոգեբանական հանդիպումներ:

43 952 ԼԴ-ից տեղահանված անձանց բաշխվել է 52 180 կտոր տաք հագուստ:  
10 709 ընտանիք ստացել 28 014 կտոր անկողնային, խոհանոցային և այլ պարագաներ:  
10 559 հիգիենիկ պարագաների փաթեթներ են բաշխվել ԼԴ-ից տեղահանված ավելի քան 5000 ընտանիքների:

500 ԼԴ-ից տեղահանված ընտանիք ստացել է տաքացուցիչներ և խոհանոցային սպասք:

6 պետական կացարաններ, որտեղ բնակվել են ԼԴ-ից տեղահանված անձինք, ստացել են աջակցություն խոհանոցային և կենցախային տեխնիկայի, գույքի և կահույքի:

Սննդի աջակցություն տեղահանված անձանց

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի ֆինանսավորմամբ, Երևանի, Արագածոտնի, Արմավիրի, Լոռու, Շիրակի, Տավուշի, Կոտայքի մարզերում կոլեկտիվ կենտրոններում բնակվող տեղահանված և խոցելի մարդկանց տրամադրել է սննդի աջակցություն: Նրանք ստացել են 8 անուն ապրանքից բաղկացած փաթեթ, որը պարունակել է հնդկաձավար, ցորեն, պաստա, ոսպ, բրինձ, լոբի, ձեթ և չոր մրգեր:

Սննդի օգնությունը տրամադրվել է ԵՄ, ԱՄՆ Չարգացման գործակալության, Ֆրանսիայի կառավարության և Ֆլանդերսի աջակցությամբ:  
Անհատական փաթեթներից բացի, սննդի հավելյալ ծանրոցներ են ստացել այն կենտրոնները, որտեղ գործում է ընդհանուր խոհանոց: Դրանք պարունակել են արևածաղկի ձեթ, յոդացված աղ և պահածոյացված միս:  
Ընդհանուր առմամբ բաշխվել է մոտ 30 տոննա սնունդ:



МЕДИЦИНСКА АСОЦИЈАЦИЈА  
МАКЕДОНСКИ КРАЈ  
ЗА ЗАШТИТА НА  
ПРАВИТЕ НА  
ПОСРЕДНО  
ПОСРЕДСТВО

UNDAI  
2  
STAND MIXER  
WITH BAKE

UNIT  
Електрички  
чайник  
1.8L

MICROWAVE OVEN  
MODEL NO. I H85M0WH

artel  
МИНИ-ПЕЧ  
ЕЛЕКТРИЧСКА  
48 Литров  
3 года гарантии

Մեծածավալ աջակցություն է տրամադրվել 14 համայնքահեն կազմակերպության, որոնք ներառված են եղել ԼԴ-ից տեղահանված անձանց կարիքների արձագանքման գործում:  
Համայնքների և համայնքային կամավորների նախաձեռնությունների ֆինանսավորման շրջանակներում իրականացվել են 25 համայնքային զարգացման ծրագրեր՝ խաղահրապարակների կառուցում, կացարանի վերանորոգում, գրադարանի, մեծահասակների սենյակի կահավորում, բացօթյա կինոթատրոնի կառուցում, թեքահարթակների տեղադրում, ավտոբուսի կանգառների նորոգում, սպորտդպրոցների գույքի տրամադրում, այգիների և փողոցների բարեկարգում, գորգագործական խմբակի աջակցություն:  
60 խոցելի ընտանիքների երեխաներին տրամադրվել են պլանշետներ՝ կրթության հասանելիության ապահովման նպատակով:  
1500 երեխա ստացել է դպրոցական պայուսակներ՝ գրենական պարագաներով և սմարթ ժամացույց՝ դիմակայունության բարձրացման նպատակով:  
Փախստական երեխաների իրավունքների վերաբերյալ 30 տեղեկատվական հանդիպում է կազմակերպվել երեխաների համար:  
818 երեխայի հետ ՀԿԽԸ հոգեբաններն անցկացրել են անհատական զրույցներ՝ խնդիրների բացահայտման նպատակով:  
3940 երեխա մասնակցել է Երեխաների դիմակայունության բարձրացմանն ուղղված ծրագրային բազմաբնույթ միջոցառումներին:  
Ծնողների հետ իրականացվող հանդիպումներին մասնակցել է 450 ծնող:  
Համայնքային, բակային ճամբարներ են կազմակերպվել 350 երեխայի համար:  
Ավելի քան 68 հոգի աշխատանքի է տեղավորվել մասնագիտական վերապատրաստում անցնելուց հետո:  
Շուրջ 300 խոցելի սիրիահայ ընտանիք օգտվել է բնակարանային վարձի տրամադրման ծրագրից:  
Բնակարանային կոնսորցիումի շրջանակներում մշակվել է տեղահանված անձանց բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ռազմավարություն:

**1500 երեխա ստացել է դպրոցական պայուսակ՝ գրենական պարագաներով և սմարթ ժամացույց՝ դիմակայունության բարձրացման նպատակով:  
3940 երեխա մասնակցել է Երեխաների դիմակայունության բարձրացմանն ուղղված ծրագրային բազմաբնույթ միջոցառումներին:**

#### **Աջակցություն համայնքներին**

2018թ. հուլիսից մեկնարկած «Սիրիահայերի դիմակայունության բարձրացում» ծրագիրը իրականացվում է Եվրոմիության, Ավստրիական Կարմիր խաչի և Ավստրիական Չարգացման գործակալության համատեղ ֆինանսավորմամբ:

Ծրագրի սոցիալ - հոգեբանական բաղադրիչի շրջանակներում շարունակվել է երիտասարդ կամավորների միջոցով սոցիալ-հոգեբանական այցելու ծառայության կազմակերպումը Երևան, Աբովյան և Հրազդան քաղաքներում 200-ից ավելի միայնակ փախստական հանրակացարանաբնակ, սիրիահայ և տեղացի տարեցների համար:

Ըստ կարիքի այցելություններ են կազմակերպվել կամավորների կողմից, տրամադրվել է սոցիալ-հոգեբանական աջակցություն: Եռամսյակը մեկ տրամադրվել են սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ, հակահամաճարակային պաշտպանիչ միջոցներ:



Տարվա ընթացքում կամավորները շահառուների սոցիալականացմանը և հանգստի կազմակերպմանը աջակցելու նպատակով իրականացրել են զանազան սոցիալական և մշակութային միջոցառումներ՝ այցելություններ թատրոններ, համերգներ, տեսարժան վայրեր:

Ծրագրի շրջանակներում հիմնված **Սիրիահայերի աջակցման Սոցիալ-հոգեբանական կենտրոնը**, որի նպատակն է նպաստել սիրիահայերի ինտեգրմանը՝ հոգեբանական անհատական և խմբային խորհրդատվություններ է իրականացրել սիրիահայ տարբեր տարիքային խմբերի, ինչպես նաև ընտանիքների համար: Յուրաքանչյուր ամիս սիրիահայերի սոցիալականացմանն ուղղված մշակութային միջոցառումներ են իրականացվել: Մշակվել և շահագրգիռ կազմակերպությունների միջոցով տարածվել են կենտրոնի ծառայությունները լուսաբանող տպագրական և առցանց նյութեր:

Ծրագրի կրթական բաղադրիչով 4 ծրագիր է իրականացվել Երևանի դպրոցներում, ինչպես նաև՝ պետական կառույցների ու ՀԿ-ների ներկայացուցիչների համար:

**Երեխաների կայուն զարգացում** ենթածրագիրը 20 պարապմունքներից բաղկացած դասընթաց է: Այն նախագծմած է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ընկերությունների և «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության «Երեխաների կայուն զարգացում» ծրագրի հիման վրա: Նպատակն է նպաստել հակամարտության գոտուց տեղահանված երեխաների ինտեգրմանն ու դժվարությունների հաղթահարմանը: Այն իրականացվել է վերապատրաստված կամավորների օգնությամբ՝ 170 երեխաների համար Երևանի 7 դպրոցներում:

- **Հանդուրժողականության ուսուցում** ենթածրագրի շրջանակներում 83 ուսուցիչներ վերապատրաստման դասընթացներ են անցել կրթական ոլորտի փորձագետների ներգրավմամբ, որից հետո ղեկավարվելով ծրագրի համապատասխան ուղեցույցներով տարրական դասարանների 2554 աշակերտների համար իրականացրել են դասընթացներ:

**Յոգեբանական առաջին օգնություն** ենթածրագրով նախատեսված դասընթացներ են իրականացվել 407 մասնակից ուսուցիչների, գործընկերների և ՅԿԽԸ աշխատակիցների համար:

**Երիտասարդների կայուն զարգացում** ենթածրագրում համայնքային 17 նախաձեռնություններ շարունակել են իրենց գործունեությունը, 23 նոր ծրագրեր արժանացել են հավանության : Հունվար-հունիս ամիսներին բոլոր նախաձեռնություններն իրականացվեցին ՅՅ 8 մարզերի 19 համայնքներում և Երևանում, ներգրավելով 430 երիտասարդների: Նախաձեռնություններն իրականացվել են հետևյալ ուղղություններով. կրթություն, Էկոլոգիա, մասնագիտական կողմնորոշում, հմտությունների զարգացում, ժամանց/ինտեգրում:

ՄԱԿ ՓԳՀ (UNHCR)-ի կողմից ֆինանսավորվող «**Փախստականների պաշտպանություն և տնտեսական ինտեգրում**» ծրագրի շրջանակներում Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Երևանում, Արարատում (Մասիս, Նիզամի), Արմավիրում (Արմավիր, Էջմիածին, Մեծամոր), Կոտայքում (Աբովյան, Չարենցավան, Հրազդան, Ծաղկաձոր), Վայոց Ձորում (Եղեգնաձոր, Ջերմուկ) և Սյունիքում (Գորիս, Կապան, Շինուհայր, Տեղ) Ղարաբաղյան հակամարտության արդյունքում Հայաստան տեղափոխված 3940 երեխաների համար կազմակերպել է սոցիալական և մշակութային միջոցառումներ, բակային ճամբարներ, և 450 ծնողների համար իրականացրել ծնողավարության ուղղված դասընթացներ, մշակութային միջոցառումներ: Ծրագիրն իրականացվել է վերապատրաստված 60 կամավորների օգնությամբ:

### **Հայաստան, Լեռնային Ղարաբաղ 2020**

**Հայաստան, Լեռնային Ղարաբաղ 2020** ծրագրի շրջանակներում վերապատրաստված 60 կամավորներ 600 երեխաների համար իրականացրել ենք 20 պարապմունքներից բաղկացած դասընթացներ՝ Կոտայքում (Հրազդան, Աբովյան, Չարենցավան), Արարատ (Մասիս և հարակից համայնքներ), Գեղարքունիք (Սևան), Տավուշ (Իջևան, Դիլիջան): 20 պարապմունքներից զատ իրականացվել են նաև սոցիալական և մշակութային միջոցառումներ՝ հնարավորություն տալով երեխաներին ավելի լավ ճանաչել համայնքը, ընկերանալ միմյանց հետ:

### **Կրթության հասանելիության ապահովում սահմանամերձ համայնքների դպրոցների և ղարաբաղյան հակամարտության հետևանքով տեղահանված երեխաների համար**

**Կրթության հասանելիության ապահովում սահմանամերձ համայնքների դպրոցների և ղարաբաղյան հակամարտության հետևանքով տեղահանված երեխաների համար** ծրագիրը իրականացվել է Սյունիքում՝ Տեղ, Սյունիք, Գեղանուշ համայնքներում, Գեղարքունիքում՝ Վարդենիս և Մեծ Մասրիկ համայնքներում, Արմավիրում՝ Մեծամոր համայնքում, Արարատում՝ Մասիս քաղաքում, Կոտայքում՝ Հրազդան և Ծաղկաձոր համայնքներում, Երևանում՝ ՅԿԽԸ Սոցիալ-հոգեբանական կենտրոնում: Ծրագիրը նպատակ ուներ ապահովել կրթության հասանելիությունը սահմանամերձ համայնքների կրթական հաստատություններ հաճախող երեխաների, ինչպես նաև Հայաստանի համայնքներում ապաստանած Ղարաբաղյան հակամարտության՝ 2020-ի սրացման հետևանքով Հայաստանում ապաստանած երեխաների համար երեխաների համար: Ծրագրի միջոցներով վերանորոգվել, կահավորվել և անհրաժեշտ պարագաներով համալրվել են երեխաների զարգացման 10 կենտրոնները՝ Ժպիտների ակումբներ/ Անվտանգ տարածքներ, որտեղ իրականացվում են.

Դասապատրաստումներ

Սիրողական խմբակներ

Սոցիալական և մշակութային միջոցառումներ:

Ծրագիրն իրականացվել է ԿԽՄԿ աջակցությամբ:





### **ՀԿԽԸ արձագանքը Ղարաբաղյան հակամարտության սրացմանը**

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) Ղարաբաղյան հակամարտության սրացման առաջին իսկ օրերից մարդասիրական օգնություն է տրամադրել անվտանգության նկատառումներով Հայաստան տեղափոխված անձանց:

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման գործընկերների և միջազգային ու տեղական կազմակերպությունների կողմից ավելի քան 4 մլրդ. 791 մլն. 547 հազար ՀՀ դրամ է (9 758 749 ԱՄՆ դոլար) տրամադրվել Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ մարդկանց ամենահրատապ ու անհետաձգելի կարիքներին արձագանքելու համար:

### **Սնունդ և ոչ պարենային ապրանքներ**

Շուրջ 300 000 փաթեթ և միավոր/իր սնունդ, հիգիենիկ պարագաներ, հագուստ, առաջին անհրաժեշտության անհատական օգտագործման և անկողնային պարագաներ, կենցաղային իրեր, բժշկական սարքավորումներ/պարագաներ, առաջին օգնության դասընթացներ և արկղիկներ, գրենական պիտույքներ, սայլակներ, քայլակներ և ձեռնափայտեր:

### **Կանխիկ աջակցություն 2 331 960 588 ՀՀ դրամ**

- Հիմնական կարիքների մատչելիության ապահովում. կոմունալ վճարներ ապաստարանների համար, որտեղ տեղավորվել են Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով տեղահանված մարդիկ (474 ապաստան, ավելի քան 11.500 մարդ, 370 500 000 մլն դրամ)
- Աջակցություն հյուրընկալող ընտանիքներին (17 966 մարդ, **538 990 588** հազար ՀՀ դրամ, յուրաքանչյուր չափահասի համար՝ 30 000 ՀՀ դրամ)
- Աջակցություն տեղահանված անձանց (14 000 մարդ, 952 միլիոն ՀՀ դրամ, յուրաքանչյուր անձին՝ 68 000 ՀՀ դրամ):
- Կանխիկ դրամական աջակցություն Սյունիքի և Գեղարքունիքի սահմանամերձ համայնքներին (27 համայնքների մոտ 1680 ընտանիքի միանվագ կանխիկ աջակցություն՝ մինչև ձմեռնամուտ անասնակեր և վառելափայտ ձեռք բերելու համար 470 470 000 ՀՀ դրամ):



## **Հոգեբանական աջակցություն**

### **ՀԿԻԸ Թեժ գծեր**

ավելի քան 25,000 զանգ

### **Հոգեբանական և առաջին հոգեբանական աջակցության**

Ավելի քան 24,000 անձի

վիրավոր զինծառայողներ և նրանց հարազատներին, հակամարտության ընթացքում զոհվածների մարմինների նույնականացման գործընթացում ներգրավված քաղաքացիներ, պետական հաստատություններում և մասնավոր տներում ապաստանած անձինք, անհայտ կորածների և գերիների հարազատներ:

### **Երեխաների դիմակայունության բարձրացում**

**(Հոգեբանական, կրթական աջակցություն)**

Ավելի քան 5000 երեխա

### **ՀԿԻԸ հետվնասվածքային վերականգնողական կենտրոն**

370 բուժված վիրավոր զինածառայող

### **Որոնում ծառայություն**

Արձագանք ավելի քան 3860 զանգի

### **Քովիդ-19-ի տարածումը նվազեցնելու կանխարգելիչ միջոցներ**

Շուրջ 600 000 դիմակ/ 150 000 ալկոհոլ



Handwritten label on the stack of supplies:

Handwritten label on the stack of supplies:

Handwritten label on the stack of supplies:



# ՈՐՈՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հայկական Կարմիր խաչի ընկերության Որոնում ծառայության գործունեությունն ուղղված է բնակչության տեղաշարժի արդյունքում կազմալուծված ընտանիքների վերամիավորմանը, պատերազմների, աղետների և հակամարտությունների հետևանքով անհայտ կորածների որոնմանը և գոհվածների շիրիմների վայրը հաստատող փաստաթղթերի հայտնաբերմանը, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարհանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնմանը և հատկացմանը:

## Ընտանեկան կապերի վերականգնում (ԸԿՎ)

ՀԿԽԸ Որոնում ծառայությունը 2021թ. ընթացքում ստացել և բացել է 12 որոնման հայտ՝ հետևյալ ուղղություններով՝ անհատների որոնում, ընտանիքի անդամների հետ վերամիավորմանը կամ սոցիալական իրավիճակի բարելավմանը նպաստող փաստաթղթերի որոնում և հատկացում, գոհվածների շիրիմների գտնվելու վայրի որոնում և դրանց գոյությունը հաստատող փաստաթղթերի տրամադրում, Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում տարհանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնում և հատկացում: Նոր հայտերի թվի նվազումը պայմանավորված էր համավարակի պայմաններում շփման սահմանափակումների հետ: Որոնում ծառայությունը ստացել է գանգեր մի շարք նոր հայտերի մասին, սակայն, սահմանափակումների պատճառով, շահառուների այցը ԿԳ հետաձգվել է:

ՀԿԽԸ Որոնում ծառայության աշխատակիցների և կամավորների հմտություններն ու ունակությունները զարգացնելու նպատակով, 2021թ. հուլիս ամսին կազմակերպվել է ուսուցողական դասընթաց՝ Ընտանեկան կապերի վերականգնում (ԸԿՎ) արտակարգ իրավիճակներում թեմայով: Դասընթացի մասնակիցները տեղեկացվեցին՝ ինչպես արագ և արդյունավետ կազմակերպել ԸԿՎ-ն աղետների դեպքում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտակարգ իրավիճակների ժամանակ կորած հարազատի որոնումն ու ճատակագրի պարզումն ամենակարևորն է ընտանիքների համար:

Ամփոփելով տարին՝ տարեվերջում, Որոնում ծառայությունը կլոր սեղան-հանդիպում կազմակերպեց համագործակից պետական կառույցների ներկայացուցիչների հետ: Հանդիպման հիմնական թեման ԱԸ Որոնում ծառայության գործունեության ներկայացումն էր՝ շեշտը դնելով փոխգործակցության կարևորության վրա, քանի որ առանց պետական կառույցների հետ ճիշտ համագործակցության և վերջիններիս աջակցության հնարավոր չէ կազմակերպել ծառայության պատշաճ գործունեությունը:

## Տվյալների բազայի լրացում

FLanswer տվյալների բազայի լրացումը կարևոր գործիք է ՀԿԽԸ ԸԿՎ գործընթացի համար: 2021թ. ընթացքում տվյալների բազա դեպքերի մուտքագրումն ամբողջությամբ ավարտվել է: Մուտքագրված դեպքերի ընդհանուր թիվը 862 է:

## Սատարում անհայտ կորածների ընտանիքներին

ԿԽՄԿ-ի տվյալներով՝ Ղարաբաղյան հակամարտության առաջին սրացման հետևանքով դեռևս 1990-ականներից տարածաշրջանում անհայտ կորած է համարվում ավելի քան 4500 մարդ, որոնցից մոտ 400-ի մասին որոնման հայտեր բացվել են Հայաստանում: ԿԽՄԿ-ն իրականացրել է բազում գնահատումներ և եկել այն եզրակացության, որ, նույնիսկ ավելի քան 30 տարի անց, անհայտ կորածների ընտանիքներն (ԱԿԸ) ունեն տնտեսական, իրավական, հոգեբանական և/կամ սոցիալական կարիքներ:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, Հայաստանում ԿԽՄԿ պատվիրակության ԿԽՄԿ-ի աջակցությամբ, շարունակում է աջակցել անհայտ կորածների ընտանիքներին՝ 200 ընտանիք Շիրակի (13 ընտանիք), Գեղարքունիքի (23 ընտանիք), Վայոց Ձորի (5 ընտանիք), Արմավիրի (41 ընտանիք), Լոռու (22 ընտանիք), Տավուշի (14 ընտանիք), Սյունիքի (46 ընտանիք), Արարատի (36 ընտանիք) մարզերից: ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերը կանոնավոր կապ են պահպանում այս մարզերում բնակվող անհայտ կորածների ընտանիքների հետ: Ըստ անհրաժեշտության շահառու ընտանիքների համար անցկացվել են հանդիպումներ սոցիալական, առողջապահական, հոգեբանական ոլորտների մասնագետների հետ:

Համավարակի տարածմանը զուգահեռ, ՀԿԽԸ Որոնում ծառայությունը ստանում էր բազում գանգեր Ղարաբաղյան հակամարտության հետևանքով 1990-ականներին անհայտ կորած անձանց ընտանիքներին անհայտ կորածների ընտանիքներից, որոնք փաստում էին, որ հումանիտար օգնության կարիք ունեն: Ուստի, տարբեր մարզերում Որոնում ծառայության մարզային պատասխանատուները ընտանիքներին ուղղորդել են ՀԿԽԸ աջակցության տարբեր ծրագրերի, ինչպես նաև մարզերում գործող այլ կազմակերպությունների:

# ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ



ՀԿԻԸ Առաջին օգնության (ԱՕ) ուսումնամեթոդական կենտրոնն ԱՕ գիտելիքներ և հմտություններ է տարածում բնակչության լայն շերտերի և տարբեր տարիքային և մասնագիտական խմբերի շրջանում, իրականացնում է ԱՕ սպասարկում զանգվածային միջոցառումների ժամանակ, ինչպես նաև կազմակերպում է ծավալուն գործունեություն՝ ուղղված աճող սերնդի անվտանգ վարքագծի ձևավորմանը:

Կենտրոնն իրականացնում է դասընթացներ Առաջին օգնության Գլոբալ խորհրդատվական կենտրոնի չափորոշիչներին համապատասխան (GFARC):



## ԱՕ դասընթացներ

2021 թվականին իրականացվել են դասընթացներ ՀԿԽԸ կամավորների, տարբեր կազմակերպությունների աշխատակիցների, Տավուշի, Վայոց Ձորի, Սյունիքի, Արարատի, Գեղարքունիքի սահմանամերձ և հեռավոր համայնքների անդամների (բնակիչներ, ուսուցիչներ, առաջնային բժշկական օգնության և սպասարկման ոլորտի աշխատակիցներ, դպրոցականներ), Ղարաբաղյան հակամարտության հետևանքով տեղահանվածների և սրանց հյուրընկալող հաստատությունների անձնակազմի, Տավուշի, Վայոց Ձորի և Սյունիքի հրշեջ-փրկարարների և Տավուշի սահմանամերձ համայնքների ԱԻՆ քաղաքացիական պաշտպանության թիմերի անդամների համար:

Ընդհանուր առմամբ, 2021 թվականի ընթացքում ԱՕ ոլորտում իր գիտելիքներն ու հմտությունները թարմացրել է 3000 մարդ:

Մասնավորապես՝ դասընթացներ և սեմինարներ են իրականացվել Վայոց Ձորի մարզպետարանի, Առողջապահության ազգային ինստիտուտի, Գյումրիի շուրջօրյա ինսամբի կենտրոնի, «Ձվարթևոց» օդանավակայանի, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, Նիդերլանդների դեսպանատան, «Տրանսգազ», «Մայ Արմենիա», «ԿՈԿԱ-ԿՈԼԱ Հեյլենիկ», «Վորլդ Վիժն», «Հոլիդեյ Ինն», «Դաբլ թրի բայ Հիլտոն», «Սի-Զյու-Ջի», «Փիփլ ին Նիդ», Հանրային լրագրության ակումբի, «Սիմենս» ընկերության, Հայկական բարեգործական ընդհանուր միության, «Արշավներ» ակումբի և մի շարք այլ կազմակերպությունների աշխատակիցների համար:

### **ԱՕ դասընթացներ ՀՀ սահմանամերձ համայնքների բնակիչների համար**

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են «Առաջին օգնության հիմունքներ» թեմայով դասընթացներ Տավուշի մարզի 10 (Բարեկամավան, Դովեղ, Բաղանիս, Ոսկեպար, Սևքար, Կիրանց, Ներքին Ճաղկավան, Բերքաբեր, Վազաշեն, Այգեհովիտ), Վայոց Ձորի 5 (Չառիթափ, Բարձրունի, Խնձորուծ, Խաչիկ, Արենի), Արարատի 2 (Պարույր Սևակ, Երասխավան), Սյունիքի 12 (Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, Որոտան, Կոռնիձոր, Շիկահող, Շիշկերտ, Ջանտ, Ծավ, Սրաշեն, Խնձորեսկ, Տեղ, Դավիթ Բեկ), Գեղարքունիքի 2 (Մեծ Մասրիկ, Վարդենիս) սահմանամերձ համայնքներում: Դասընթացներին մասնակցել են 300 հոգի: ԱՕ ներածական դասընթացներ են իրականացվել նաև 773 դպրոցահասակ երեխաների համար:

### **ԱՕ դասընթացներ ՀՀ սահմանամերձ համայնքների բուժանձնակազմի համար**

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են «Առաջին օգնության հիմունքներ» թեմայով դասընթացներ վերոհիշյալ համայնքների, ինչպես նաև Գորիս և Իջևան քաղաքների ամբուլատորիաների և բուժկետերի աշխատակիցների համար: Դասընթացներին մասնակցել է 172 բուժաշխատող:

### **ԱՕ դասընթացներ ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի կամավորների համար**

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է «Առաջին օգնության հիմունքներ» թեմայով 5 դասընթաց Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի, Արարատի և Վայոց Ձորի 104 կամավորների համար:

### **ԱՕ հրահանգիչների վերապատրաստում**

2021 թվականին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են ՀՀ մարզերից և Արցախից ԱՕ հրահանգիչների վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել է ՀԿԽԸ 29 ԱՕ հրահանգիչ:

### **ԱՕ դասընթացներ Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի փրկարարների համար**

Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են ԱՕ դասընթացներ Արարատի, Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի և Շիրակի մարզի 75 փրկարարների համար:

### **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և Հայկական Կարմիր խաչի ընկերության (ԱԻՆ-ԿԽՄԿ-ՀԿԽԸ) համագործակցություն**

ԱԻՆ-ԿԽՄԿ-ՀԿԽԸ համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են «Առաջին օգնության հիմունքներ» և «Աճյունների հետ վարվելակարգի կանոններ» գիտելիքների թարմացման դասընթացներ՝ Տավուշի մարզի 12 (Ազատամուտ, Չինարի, Այգեպար, Մովսես, Պառավաքար, Ներքին Կարմիր աղբյուր, Ոսկևան, Բերդավան, Կոթի, Դովեղ, Չորաթան և Սարիգյուղ) սահմանամերձ համայնքների Քաղաքական պաշտպանության թիմերի 213 անդամների, ինչպես նաև Տավուշի, Վայոց Ձորի և Սյունիքի 63 հրշեջ-փրկարարների համար: Յուրաքանչյուր թիմին տրամադրվել են նյութեր նախկինում տրամադրված 2-ական արկղիկների և 1-ական ԱՕ պայուսակի պարունակությունը թարմացնելու համար:





**Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԻՄՖ) հետ համագործակցության շրջանակներում, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ, Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվում է «Արտակարգ իրավիճակներում առողջապահական խնդիրների նկատմամբ տեղական համայնքների դիմակայունության բարձրացում Հարավային Կովկասում» ծրագիրը, որում ներգրավված են ՀԿԽԸ 34 առաջնորդ կամավորներ և 145 համայնքային կամավորներ Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի, Լոռու, Շիրակի մարզերից և Երևանից:**

Կամավորները վերապատրաստվել են՝ իրենց համայնքներում աղետների և ճգնաժամերի առողջության հետ կապված հետևանքներին նախապատրաստվելու և արձագանքելու նպատակով: Վերապատրաստումներն իրականացվել են աղետների կառավարման և արտակարգ իրավիճակներում առողջության պահպանման ուղղությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով առողջությանը, համաճարակային/համավարակային պատրաստվածությանը, արձագանքմանը և վերահսկմանը, սանիտարահիգիենիկ միջոցառումներին, ԱՕ և զանգվածային զոհերի դեպքերին արձագանքմանը, հոգեբանական առաջին օգնությանը, սթրեսի կառավարմանը: Վերապատրաստված կամավորներն ուղղակիորեն կրթել են թիրախային մարզերի 69 տեղական համայնքների ավելի քան 53 801 անդամի և անուղղակիորեն՝ 161 403, ինչպես նաև տրամադրել են ավելի քան 100 000 օրինակ տեղեկատվական և ուսումնական նյութեր:

**2021 թվականի ընթացքում ԱՕ ոլորտում գիտելիքներն ու հմտությունները թարմացրել է 3000 մարդ**

## ԱՕ ծառայություն

2021 թվականին ՖԻՖԱ և ՈՒԵՖԱ շրջանակներում երևանում և գյումրիում կայացած 50-ից ավելի ֆուտբոլային խաղերի ընթացքում ՀԿԽԸ ԱՕ խմբերն իրականացրել են ԱՕ ծառայություն:

## Հանրային միջոցառումներ

Առաջին օգնության համաշխարհային օրվա առիթով 2021 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում կազմակերպվել են հանրային միջոցառումներ Շիրակի, Լոռու, Վայոց Ձորի, Սյունիքի և Տավուշի մարզերում, որոնց ժամանակ հանրային վայրերում տեղադրվել են ԱՕ կայաններ, հանրությանը տրամադրվել է տեղեկատվություն ԱՕ վերաբերյալ, ինչպես նաև բեմադրվել են նմանակումներ և անցորդները ցուցաբերել են առաջին օգնություն:

ՀԿԽԸ ԱՕ բաժինը մասնակցել է ՀՀ ԱԻՆ կողմից դպրոցներում, ուսումնական հաստատություններում իրականացվող վարժանքներին:

## Մեդիա համագործակցություն

ԱՕ թիմը նկարահանվել է Հ1 հեռուստաընկերության «Առողջ ապրելակերպ» և «Առաջին օգնություն», «Շանթ» հեռուստաընկերության «Բուժ-Ինֆո» ավելի քան 30 հաղորդումներում:





# ՍՈՑԻԱԼ - ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ



Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, նպատակ ունենալով աջակցել պետական համակարգին՝ նվազեցնելու սոցիալապես անապահով մարդկանց խոցելիությունը և բարելավել համայնքների բնակչության առողջական վիճակը, լայնածավալ գործունեություն է ծավալում սոցիալական աջակցության և առողջապահության ոլորտներում:



### Ինտեգրացված տնային խնամքի ծառայություններ

ՀԿԽԸ շարունակում է ինտեգրացված տնային խնամքի ծառայություններ մատուցել ՀՀ Լոռու, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում:  
Ծառայություն ստացողները վերոնշյալ երեք մարզերի տարեց, քրոնիկական հիվանդություն կամ հաշմանդամություն ունեցող անձինք են, որոնք ընտրվում են սոցիալական ծառայությունների, ինչպես նաև առողջապահական համակարգի ներկայացրած ցուցակներից՝ ծրագրի աշխատակիցների կողմից մանրամասն անհատական կարիքի գնահատման հիման վրա:

### Ծրագրի շահառուների խնամքն իրականացնում են՝

- 1** խնամքի բուժքույրերը՝ երեք մարզում 14 բուժքույր,
- 2** տնային խնամողները՝ յուրաքանչյուր մարզում 30 տնային խնամող,
- 3** կամավորները՝ Լոռու մարզում՝ 60, Շիրակի մարզում՝ 40, Վայոց Ձորի մարզում՝ 20, որոնք անցել են համապատասխան դասընթացներ:

2020թ-ից սկսած ծառայությունները սկսել են տրամադրվել ոչ միայն շրջկենտրոններում, այլև հետևյալ քաղաքներում՝ Սպիտակ, Ալավերդի, Արթիկ, Մարալիկ:

Ծառայությունները հստակ տարանջատված են խնամք իրականացնող այս երեք խմբերի համար: Մասնավորապես, բուժքույրերի կողմից իրականացվում են ներարկումներ՝ ըստ տեղամասի բժիշկի նշանակման, մաշկի, լորձաթաղանթների

խնամք, ատամների, բերանի խոռոչի խնամք, պառակտվածների կանխարգելում ու մշակում, հիվանդի շարժողունակությունը վերականգնելու նպատակով հատուկ վարժությունների, մերսումների իրականացում և այլն: Տեսախոս խնամողների կողմից տրամադրվում է աջակցություն կենցաղային հարցերում, մասնավորապես՝ տան մաքրում, սննդի պատրաստում, աջակցություն սնունդ ընդունելիս: Կամավորների կողմից մատուցվող ծառայությունները հիմնականում ներառում են այցելություններ շահառուներին, գրույցներ նրանց հետ, ընթերցանություն, ուղեկցում խանութ, դեղատուն, աջակցություն կոմունալ վճարումների կատարման, փաստաթղթերի լրացման ընթացքում և այլն:

Անհատական կարիքից ելնելով՝ շահառուները ստանում են նաև անվասայլակներ, քայլակներ, հակապառակտացիայի բարձեր և ներքնակներ, ձեռնափայտեր, այլ անհրաժեշտ պարագաներ: Բոլոր երեք խնամք իրականացնողները, ծառայության մատուցմանը զուգահեռ, տրամադրում են նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն:

Խնամքը իրականացվում է տեղամասային պոլիկլինիկաների հետ սերտ համագործակցությամբ, տեղամասային բժշկի անմիջական հսկողությամբ, անհրաժեշտության դեպքում նեղ մասնագետների ներգրավմամբ: 2021 թվականի ավարտին ծառայությունը տրամադրվել է 530 շահառուի: 2021 թվականին ՀԿԽԸ-ն շարունակել է տեսախոսի տրամադրումը համավճարի սկզբունքով:

Ակտիվ երկարակեցություն բաղադրիչի շրջանակներում ՀՀ Շիրակի, Լոռու և Վայոց Ձորի մարզերում ստեղծվել ու գործում է տարեցների Ակտիվ երկարակեցության 31 Նախաձեռնող խումբ, որոնցում ներգրավված են մոտ 400 տարեցներ (205 կին և 195 տղամարդ):

Մասնակցության վրա հիմնված ակտիվ երկարակեցությունը հնարավորություն է տալիս մարդկանց ակտիվ դեր ունենալ իրենց սեփական և համայնքային կյանքի բարելավման գործընթացում: Մարդիկ ձևավորում են խմբեր, բացահայտում և վերլուծում են իրենց և համայնքի խնդիրները, որոշումներ կայացնում և հանդես գալիս որպես հիմնական դերակատար վերը նշված գործընթացներում: Ծրագրի նպատակն է ավելացնել համայնքային կյանքում ներգրավված տարեց անձանց և նրանց շփումները, այսինքն, խթանել տարեցների մասնակցությունը համայնքային կյանքի տարբեր ոլորտներում: ՀԿԽԸ ապահովել է Նախաձեռնող խմբերի ուսուցանումը, կարողությունների զարգացումը: Համայնքապետարանները Նախաձեռնող խմբի անդամներին հավաքատեղի են հատկացրել՝ նրանց պարբերական հանդիպումների, աշխատանքի և գործողությունների պլանավորման համար:

Նախաձեռնող խմբերին հնարավորություն է տրվել ծրագրային առաջարկով դիմել փոքր դրամաշնորհներ ստանալու՝ իրենց հետաքրքիր նախաձեռնությունները կյանքի կոչելու համար:

### **Խարանի և խտրականության նվազեցում և սոցիալ-հոգեբանական աջակցություն**

2021 թվականին ՀԿԽԸ-ն շարունակել է ՀՀ առողջապահության նախարարության Թոքաբանության ազգային կենտրոնի (ԹԱԿ) հետ համագործակցությամբ իրականացնել «Խարանի և խտրականության նվազեցում և սոցիալ-հոգեբանական աջակցություն» ծրագիրը, որի թիրախ են հանդիսանում բոլոր ՏԲ հիվանդները արտահիվանդանոցային փուլում:

ՏԱԿ ՊՈԱԿ-ի հետ համագործակցության շրջանակներում ՀԿԽԸ-ին տրամադրվել է ամսական տեղեկատվություն՝ հիվանդանոցային փուլի ավարտած և ամբուլատոր փուլում բուժում սկսող հիվանդների վերաբերյալ (403):



**2021 թվականի ընթացքում ՀՀ Արարատի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերի 48 համայնքներում (16՝ յուրաքանչյուր մարզում) ձևավորվել են շաքարային դիաբետով հիվանդներից կազմված 48 ինքնօգնության խմբեր, որոնք ստացել են անհրաժեշտ գիտելիքներ շաքարային դիաբետի կառավարման, ճիշտ սննդակարգի և ընդհանրապես առողջ ապրելակերպի վերաբերյալ:**

Առողջության պահպանման առաջնային օղակի, մասնավորապես տուբերկուլոզի ախտորոշմամբ և բուժմամբ զբաղվող բուժանձնակազմի հետ սերտ համագործակցություն է ստեղծվել, որի շրջանակներում ՏԲ կաբինետների կողմից տրամադրվել են բուժումը ամբուլատոր փուլում սկսող, բուժման ցածր հետևողականություն կամ խախտման միտում հիվանդների մասին տեղեկատվություն, որոնց հետ աշխատանքներ են իրականացրել ՀԿԽԸ հոգեբանները, սոցիալական աշխատողներն ու կամավորները: Հանդիպումներ են կազմակերպվել հիվանդների հետ, սոցիալ-հոգեբանական և հոգեբանական աջակցություն է տրամադրվել նրանց՝ շեշտադրելով բուժմանը հետևողական լինելու կարևորությունը: Այցերի, խորհրդատվությունների վերաբերյալ վարվել է էլեկտրոնային շտեմարան: Բուժումը բարեհաջող ելքով ավարտած 221 հիվանդների համար կազմակերպվել են «վերածնունդի» տոնակատարություններ:

Խարակի և խտրականության նվազեցմանն ուղղված 128 միջոցառում է կազմակերպվել ք. Երևանում և ՀՀ բոլոր մարզերում, որոնց մասնակցել է շուրջ 1500 անձ:

Աշխատանքային միգրանտների և այլ խոցելի խմբերի շրջանում ՄԻԱՎ արագ հետազոտությունը խթանելու վերաբերյալ լուսաբանման աշխատանքներ են իրականացվել ՀՀ բոլոր մարզերում՝ ընդհանուր թվով 3382 աշխատանքային միգրանտների, նրանց զուգընկերների և ՄԻԱՎ-ի նկատմամբ այլ խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ:

2021 թվականի ընթացքում ՀՀ Արարատի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում իրականացվել է Շաքարային դիաբետի կանխարգելում և խնամք տարեցների շրջանում ծրագիրը: Թիրախային մարզերի 48 համայնքներում (16 յուրաքանչյուր մարզում) ձևավորվել են շաքարային դիաբետի հիվանդներից կազմված 48 ինքնօգնության խմբեր, որոնք ստացել են անհրաժեշտ գիտելիքներ շաքարային դիաբետի կառավարման, ճիշտ սննդակարգի և ընդհանրապես առողջ ապրելակերպի վերաբերյալ: Կարևոր է նշել նաև, որ այս ծրագիրը չի սահմանափակվել միայն ինքնօգնության խմբերով, այլև ներգրավել է 90 բժշկի և 84 բուժքրոջ՝ վերջիններիս ուշադրությունը սևեռելով շաքարային դիաբետի խնդիրներին: Այդ նպատակով կազմակերպվել են սեմինարներ և կլոր սեղան-քննարկումներ: Նշանակալի է թվով 126 կամավորների ներդրումը ծրագրի կայացման և իրականացման գործընթացում, որոնք օգնել են խմբերի ձևավորմանը, առողջ ապրելակերպի ջատագովմանը, միջոցառումների կայացմանը և վերջիններիս շարունակական բնույթ կրելուն: Նշված համայնքներում ստեղծվել են նաև տարեցներին կազմված Առողջ Երկարակեցության (Առողջ ծերացման) խմբեր, ովքեր դասընթացներին մասնակցելուց հետո ակտիվորեն ջատագովել են իրենց համայնքներում առողջ ապրելակերպի, ճիշտ և առողջ սննդակարգի, ֆիզիկական ակտիվության և սոցիալական ներառվածության կարևորության մասին:

### **Արտակարգ իրավիճակներում առողջապահական խնդիրների նկատմամբ տեղական համայնքների դիմակայունության բարձրացում Հարավային Կովկասում**

2021 թվականին ՀԿԻԸ շարունակել է իրականացնել, «Արտակարգ իրավիճակներում առողջապահական խնդիրների նկատմամբ տեղական համայնքների դիմակայունության բարձրացում Հարավային Կովկասում» ծրագիրը, որի նպատակն է բարձրացնել համայնքների դիմակայունությունը՝ բնակչության առողջության վրա աղետների և արտակարգ իրավիճակների բացասական ազդեցությունը և հետևանքները նվազեցնելու համար, ինչպես նաև բարելավել համայնքների համաճարակներին դիմակայելու, առաջին օգնության, հոգեբանական աջակցության կարողությունները: Ծրագրում ընդգրկված Տավուշի, Սյունիքի, Վայոց Ձորի, Շիրակի և Լոռու մարզերում և Երևանում ստեղծվել են Կարմիր խաչի կամավորների ցանց, բաղկացած առաջնորդ և համայնքային կամավորներներից: Կարմիր խաչի վերապատրաստված համայնքային կամավորները իրականացրել են համայնքների կարողությունների զարգացմանը և իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, վարժանքներ, որոնք նպաստել են արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած առողջապահական խնդիրների նկատմամբ համայնքների դիմակայունության բարձրացմանը:

### **Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոն**

2021թ. ՀԿԻԸ շարունակել է Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի կառավարումը՝ նպատակ ունենալով կենտրոնի տարածքում ապահովելու մինչև 160 խնամվող անձանց կացության բարենպաստ միջավայր՝ ապահովելով պատշաճ խնամք, որակյալ սնունդ, համապատասխան առողջապահական, սոցիալ-հոգեբանական և այլ անհրաժեշտ ծառայություններ: Ընթացիկ տարում մեծածավալ վերանորոգման աշխատանքներ են ընթացել Կենտրոնում, մասնավորապես վերանորոգվել և կահավորվել է 1-ին մասնաշենքի 2 բնակելի հատվածները, նախատեսված 48 շահառուի համար, 1-ին մասնաշենքի 1-ին հարկի վարչական մասը ձևափոխվել է բնակելի տարածքի (վերանորոգման աշխատանքները ընթացքում են), կառուցվել և տեխնիկապես հագեցվել է տաք ջրամատակարարման համար լրացուցիչ կայան, իրականացվել է խոհանոցի վերանորոգում, ճաշարանի վերանորոգում, սրահի ընդլայնում և կահավորում, վարչական մասնաշենքի երկրորդ հարկի վերանորոգում և կահավորում, վարչական մասնաշենքի ջեռուցման աշխատանքների իրականացում, 2-րդ մասնաշենքի 2 սենյակների վերաձևափոխում ժամանցի սենյակի և վերանորոգում: Ընդհանուր առմամբ 2021 թվականի ընթացքում իրականացվել է 120 մլն դրամից ավելի ներդրում՝ վերանորոգման և կահավորման համար:





2021 թ.-ին ՀԿԽԸ-ն շարունակել է իրականացնել «Աշխատելով միասին հանուն որակյալ խնամքի, բարեկեցության և արժանապատիվ կյանքի» ծրագիրը, Ավստրիական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսավորմամբ:

Ծրագրի նպատակն է բարելավել ՀԿԽԸ Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի բնակիչների ինտեգրացված խնամքի և սոցիալական ծառայությունների որակը: Խնամքի ծառայությունների բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումներ են իրականացվել, որոնք կրում են շարունակական բնույթ: Խնամք իրականացնող անձնակազմի համար կարողությունների զարգացման նպատակով մի շարք դասընթացներ են կազմակերպվել: Ծրագրում ընդգրկված թվով 25 կամավորներ, մասնագիտական անձնակազմի անմիջական ղեկավարության և վերահսկողության ներքո, ամենօրյա աջակցություն են ցուցաբերել ՀԿԽԸ Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի խնամքի թիմին և շահառուներին, այդ թվում նաև հաղորդակցվելու, գրուցելու, ընթերցանության և այլ հարցերում:

### **Արձագանք Զովիդ-19 համավարակին**

2021 թ.-ին ՀԿԽԸ-ն շարունակել է մնալ Զովիդ-19 համաճարակի արձագանքման առաջնագծում՝ իրականացնելով համավարակին դիմակայելու և արձագանքման գործողություններ: ՀԿԽԸ-ն իր կամավորների ցանցով և անձնակազմով շարունակել է ակտիվորեն ներգրավված լինել ռիսկի հաղորդակցության և իրազեկման բարձրացման ուղղված աշխատանքներում, և տեղեկատվություն է տրամադրել հիվանդության կանխարգելման, վարքագծային կանոնների և պատվաստումների վերաբերյալ (ավելի քան 1,5 մլն անձ):



Մինչ 2021 թվականի ավարտը ՀԿԻԸ-ն ամբողջ երկրում աջակցել է ավելի քան 36,000 խոցելի մարդկանց՝ տրամադրելով մարդասիրական օգնություն՝ սննդամթերքի և հիգիենայի պարագաների տեսքով, ամենախոցելիներին աջակցել է կոմունալ վճարների և վարձավճարների հատուցմամբ, անհատական պաշտպանիչ միջոցներ տարամադրելով:

### **Limitless երիտասարդական նախաձեռնություն**

**Limitless երիտասարդական նախաձեռնությունների ծրագիր** Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Սոլֆերինո ակադեմիայի կողմից հայտարարված երիտասարդական նորարարական նախաձեռնությունների մրցույթին Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորները մասնակցել են՝ ներկայացնելով իրենց գաղափարները, որ ունք միտված էին արձագանքել Քովիդ-19 համավարակի պատճառով ՀՀ համայնքներում առաջացած խնդիրներին:

Մրցույթին մասնակցում էին Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման անդամ ազգային ընկերությունները: Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորները մեծ ոգևորությամբ ներկայացրեցին 8 երիտասարդական նախաձեռնություններ, որից 6-ը հավանության արժանացան ընտրական կոմիտեի կողմից: Այնուհետև կամավորները մասնակցեցին ավելի քան 25 դասընթացների՝ ուղղված երիտասարդների կարողությունների և հմտությունների զարգացմանը:

Մասնակցելով այս դասընթացներին՝ երիտասարդները կարողացան հղկել գաղափարները՝ ստանալով հնարավորություն պիլոտային կերպով կյանքի կոչել նախաձեռնությունները՝ յուրաքանչյուրի համար արժանանալով 500 շվեյցարական ֆրանկ դրամաշնորհի, որոնց հավաստագրերը կամավորներին անձամբ հանձնել է Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Ջագան Չափազայնը:

## Ժպիտների ակումբ

**Ժպիտների ակումբ** ծրագիրն իրականացվում է Երևանում և Կոտայքի մարզում: Ծրագրում ընդգրկված են հանրակացարանաբնակ երեխաները, որոնք մասնակցում են ամենօրյա դասերին հանրակացարաններում գտնվող հատուկ կահավորված սենյակներում: Ծրագրի գլխավոր նպատակն է աջակցել երեխաների կրթական մակարդակի բարձրացմանը՝ իրականացնելով մշակութային, սպորտային և ինտելեկտուալ բնույթի միջոցառումներ: Կամավորների կողմից ամեն օր իրականացվում են այցեր և դասապատրաստումներ: Գործում են առանձին խմբակներ (անգլերեն, նկարչություն և այլն): Ամենօրյա դասապատրաստումներից բացի կամավորները ամիսը մեկ անգամ կազմակերպում են միջոցառումներ, որոնք ուղղված են երեխաների ընդհանուր զարգացմանը, այդ թվում այց թատրոն, թանգարան կամ այլ մշակութային վայրեր: Կազմակերպվում են գեղեցիկ Ամանորի, Սբ Չատկի, հունիսի 1-ի և այլ տոն օրերին:

## Հոգեկան առողջության և սոցիալ-հոգեբանական աջակցության ոլորտում իրականացրած գործունեությունը

2021թ.-ին ՀԿԽԸ-ն իրականացրել է լայնածավալ աշխատանք՝ խթանելով հոգեկան առողջությունը և հոգեբանական բարեկեցությունը հակամարտությունից և Քովիդ-19 համավարակից տուժած բնակչության շրջանում:

2021 թվականի մարտ ամսից մինչև դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ՀԿԽԸ-ն ԿԽՄԿ-ի հետ համատեղ Սյունիքի և Տավուշի մարզերում իրականացրել է Հոգեկան առողջության վերականգման և սոցիալ հոգեբանական աջակցության ծրագիր՝ նպատակ ունենալով բարձրացնել սահմանամերձ համայնքների և ԼՂ-ից տեղահանված բնակիչների հոգեբանական դիմակայունությունը: Իրականացվել է նախնական կարիքների գնահատում և քարտեզագրվել ծրագրի թիրախային համայնքներում առկա հոգեկան առողջության և սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայություններ ցուցաբերող կազմակերպությունները: Վերապատրաստվել է 12 կամավոր և 2 հոգեբան/համակարգող վերոնշյալ համայնքներից և տրամադրվել շարունակական տեխնիկական խորհրդատվություն, սուպերվիզիոն առկա և առցանց հանդիպումներ ծրագրի իրականացման ողջ ընթացքում: Կամավորների/խորհրդատուների կողմից տրամադրվել է հոգեբանական աջակցություն անհատական և խմբային խորհրդատվությունների միջոցով և իրականացվել ուղղորդումներ այլ մասնագիտացված ծառայությունների՝ այլ հոգեկան առողջության հետ կապված խնդիրների դեպքում: Իրականացվել իրազեկման միջոցառումներ թիրախային համայնքներում՝ նպատակ ունենալով նվազեցնել առկա խարանս ու բարձրացնել իրազեկվածությունը հոգեկան առողջության և սոցիալ-հոգեբանական աջակցության վերաբերյալ: Համայնքի իրազեկման աշխատանքները ներառել են Սյունիքի և Տավուշի սահմանամերձ տարբեր համայնքներում հոգեկրթական, զգայունացման, տեղեկատվական սեսիաներ առողջապահության աշխատողների, ուսուցիչների, տեղական ինքնակառավարման մարմինների և ՀԿ-ներ աշխատողների շրջանում:

2021 թվականի մարտ ամսից մայիսն ընկած ժամանակահատվածում, ՀԿԽԸ-ն ՄԱԿ-ի Չարգացման գործակալության համագործակցությամբ՝ «Կանանց տնտեսական հզորացում Հարավային Կովկասում» ծրագրի հայկական բաղադրիչի «Համայնքային կարողությունների զարգացում սոցիալ-հոգեբանական ծառայությունների միջոցով՝ Քովիդ-19 համավարակից և հակամարտությունից տուժած կանանց» ծրագրի շրջանակներում, ՀՀ Շիրակի և Գեղարքունիքի մարզերի համայնքներում իրականացրել է սոցիալ-հոգեբանական ոլորտին ուղղված գործունեություն:



ՀԿԽԸ հոգեբան փորձագետները 30 մասնակիցների համար (հոգեբան, սոցիալական աշխատող, մանկավարժ) իրականացրել են դասընթացներ Հոգեբանական առաջին օգնություն և հոգեբանական վերականգման հմտություններ թեմաներով: Ծրագրի նպատակն է վերապատրաստված մասնագետների միջոցով աջակցել տուժած համայնքներին՝ հատկապես Քովիդ-19 համավարակից և ռազմական հակամարտությունից տուժած կանանց, զարգացնել ներքին ռեսուրսներն ու կարողությունները՝ համայնքային մակարդակում ապահովելով սոցիալ-հոգեբանական ծառայությունների հասանելիությունը: Դասընթացի նպատակն էր օգնել մասնակիցներին ճանաչել սոցիալական, հուզական անհանգստությունը և անհրաժեշտության դեպքում կատարել ուղղորդումներ:

Թիրախային համայնքներից 615 հոգի մասնակցել է վերապատրաստված մասնագետների կողմից կազմակերպված թվով 30 սոցիալ-հոգեբանական միջոցառումների և 263 հոգի՝ թվով 20 ՀԱՕ դասընթացների:

ՀԿԽԸ-ն ամենօրյա ԹԵՏ գծի ծառայության միջոցով տարվա ընթացքում արձագանքել է մոտ 49 000 զանգի՝ տրամադրելով տեղեկատվություն, ուղղորդում և հոգեբանական աջակցություն:



# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ



Երիտասարդական Կարմիր խաչը (ԵԿԽ)  
Հայկական Կարմիր խաչի ընկերության  
շրջանակներում գործող կամավոր  
անդամների Երիտասարդական  
միավորում է, որը հիմնադրվել է 1992թ.  
նոյեմբերի 3-ին: Այն գործում է ՀԿԽԸ բոլոր  
մարզային և տարածքային  
մասնաճյուղերում և գործունեություն է  
ծավալում հետևյալ ոլորտներում.



### **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԿՎՈՒԹՅՈՒՆ**

իրականացնում է սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրեր ուղղված հանրակացարանաբնակ միայնակ ծերերին, ծնողագուրկ, փախստական և անապահով ընտանիքների երեխաներին

### **ԱՌՐՋԱՊԱՅՆՈՒԹՅՈՒՆ**

կազմակերպում է բազմաբնույթ հանրային միջոցառումներ ու առողջ ապրելակերպի թեմաներով դասընթացներ ուսումնական հաստատություններում

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

իրականացնում է երիտասարդ կամավորների փոխանակում, կազմակերպում և մասնակցում է միջազգային հավաքների, ճամբարների, սեմինարների, թրեյնինգների

### **ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՄ**

իրականացնում է Կարմիր խաչի հիմնարար սկզբունքների և մարդասիրական արժեքների լուսաբանում դպրոցներում և բուհերում նպաստում է կամավորական շարժման խթանմանը, կամավորների հավաքագրմանն ու ՀԿԽԸ գործունեության մեջ ներգրավմանը

# ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄ



Մենք շարունակաբար աշխատանք ենք տանում մարդասիրական արժեքների տարածման, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման, Հիմնարար սկզբունքների, Միջազգային մարդասիրական իրավունքի, խորհրդանշանի գործածության և չարաշահման, մեր գործունեության ու առաքելության վերաբերյալ իրազեկության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:





**«Կարմիր խաչի առաքելությունը Հայաստանում» և «Կամավորական գործունեություն» թեմաներով փողքասթեր հեռարձակվեցին «Արմենպրես» լրատվական գործակալության կայքում**

**2021 թվականին վերսկսվեցին լուսաբանման դասընթացներն ու շատ հանրային միջոցառումներ, որոնք նախորդ տարի Զովիդ-19 համավարակի պատճառով չեղարկվել էին:**

**Զովիդ-19-ի դեմ պատվաստումներ. ռիսկի հաղորդակցություն և հանրային իրազեկում**

Զովիդ-19 համավարակի իրազեկման արշավների շրջանակում ՀԿԽԸ կողմից հավաքագրված և պատրաստված շուրջ 1500 կամավորները շարունակել են Հայաստանի քաղաքային և գյուղական համայնքներում տեղեկատվական թերթիկների տարածումը և բնակչության շրջանում իրազեկման աշխատանքները: Վարակից պաշտպանվելու վերաբերյալ իրազեկող թերթիկները շահառուներին են տրամադրվել մարդասիրական օգնության փաթեթի հետ միասին, տրվել են նաև մարզպետարաններին և ՏԻՄ-երին, գործընկեր կազմակերպություններին:

## Եկեք պատվաստվենք

ՀՀ Առողջապահության նախարարության, Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ և Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ համագործակցությամբ Երևանում և մարզերում հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվեց «Եկեք պատվաստվենք» խորագրով իրազեկման արշավը: Այդ ընթացքում գործում էին տեղեկատվական տաղավարներ, որտեղ Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորները հանրությանն իրազեկում էին Քովիդ -19 վարակից պաշտպանվելու վարքականոնների մասին, տրամադրում դիմակ, ձեռնոց և ալկոհոլ:

Տարածվել է ավելի քան 1 500 000 տպագիր տեղեկատվական նյութ: Նույն նյութերը տարածվել են նաև առցանց տարբերակով՝ ՀԿԽԸ սոցիալական մեդիայի էջերի միջոցով: Նյութերի բովանդակությունը մշակվել է՝ ըստ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային Փեդերացիայի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության խորհուրդների:

## Եղիր հերոս քո դպրոցում և համայնքում

Առաջին օգնության համաշխարհային օրվա կապակցությամբ, ՀԿԽԸ Շիրակի, Սյունիքի, Արարատի, Լոռու մարզային մասնաճյուղերի կամավորները մարզերի տարբեր քաղաքներում ու համայնքներում անցկացրել են իրազեկման ակցիաներ, ցուցադրել են արյունահոսության, վիրակապության, սիրտ-թոքային վերակենդանացման, շնչուղիների խցանման և այլ իրավիճակներում առաջին օգնության հմտություններ: Ակցիաների շրջանակներում կամավորներն անցորդներին բաժանել են դիմակներ, ձեռնոցներ, ձեռքերի ախտահանիչ միջոցներ և իրազեկման թերթիկներ:

**Տարածվել է ավելի քան 1 500 000 տպագիր տեղեկատվական նյութ: Նույն նյութերը տարածվել են նաև սոցիալական ցանցերում՝ հասնելով մոտ 560 000 մարդու:**

Հուլիսի 29-ին «Արմենիա» հեռուստաընկերության առավոտյան ծրագրի ուղիղ եթերում տեղի ունեցավ «Մարդասիրության 100 տարին» գրքի շնորհանդեսը: Գիրքը տպագրվել է ՆյուՄեգ հրատարակչության հետ համագործակցությամբ և նվիրված է ՀԿԽԸ 100-ամյակին:

Օգոստոսի 24-25-ին «Լուսաբանում» ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ ՄՄ լուսաբանման հրահանգիչները Երևանում՝ ՀԿԽԸ գրասենյակում մասնակցել են սեմինարի, որի ընթացքում թարմացվել են Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման մասին գիտելիքները, ինչպես նաև ձեռք են բերել լուսանկարահանման և մոնտաժի բազային գիտելիքներ:

Սեպտեմբեր - դեկտեմբեր ամիսների ընթացքում ՀԿԽԸ բոլոր մարզային մասնաճյուղերն իրականացրել են Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման պատմության, հիմնարար սկզբունքների և ՀԿԽԸ գործունեության վերաբերյալ լուսաբանման դասընթացներ, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել է մոտ 10 000 աշակերտ և ուսուցիչ:

Տարվա ընթացքում պատրաստել ենք Հայկական Կարմիր խաչի գործունեությունը լուսաբանող 2 ֆիլմ և Առաջին օգնության վերաբերյալ 9 հոլովակ, տարածել ենք 17 մամուլի հաղորդագրություն:

Լուսաբանման ծրագիրն իրականացվում է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ:

ՓՈՒՍԼՆՅԵՆՔ | ԼՈՅՍ  
ՄԵՐ  
ԶԵՐՍՈՒԹՅՈՒՆ

ՄԵՆ  
ՕՍԵՐՈՒ ՄԵՆ  
ԶԵՐ  
ՕՍԵՐԻՑՅԱԼՆԱԳ

 [www.redcross.am/donate](http://www.redcross.am/donate)



# ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



Հայկական Կարմիր խաչի ընկերության առաջնահերթ զարգացման ուղղությունն է մարզային և համայնքային մասնաճյուղերի կարողությունների, այդ թվում՝ ռեսուրսների մոբիլիզացման ամրապնդումն ու հզորացումը՝ համայնքների կարիքների վրա հիմնված երկարաժամկետ ծառայություններ մատուցելու և արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելուն պատրաստ լինելու համար:



## Մասնաճյուղերի զարգացում

### Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզային մասնաճյուղերի կարողությունների զարգացում

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ համագործակցությամբ իրականացվող Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզային մասնաճյուղերում կարողությունների զարգացման համալիր ծրագրի շրջանակներում մասնաճյուղերի անձնակազմը և կամավորները հնարավորություն են ունեցել բարելավել իրենց հմտությունները և կարողությունները համայնքների կարիքների վերհանման, արձագանքման ծրագրերի իրականացման, համագործակցության ընդլայնման և մեթոդական նոր ուղիների մշակման ուղղությամբ: Այս նպատակով մի շարք դասընթացներ են կազմակերպվել, ինչի արդյունքում կամավորական նախաձեռնություններ են մշակվել և ներկայացվել մարզային կամավորների կողմից գործնականում տեսական գիտելիքների կիրառման նպատակով:

Ընդհանուր առմամբ, 50-ից ավելի ծրագրեր են իրականացվել 33 4 մարզերի 17 համայնքներում՝ երեխաների, միայնակ տարեցների և հաշմանդամների, սահմանափակ հնարավորություններով կանանց և այլ խոցելի խմբերի համար:

## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ

ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ



## ԱՐՄԱՎԻՐԻ

ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ



## ՍՅՈՒՆԻՔԻ

ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ



## Մարզային մասնաճյուղերի կամավորների կողմից իրականացված ծրագրերն են.

### Երեխաների կայուն զարգացում

Դպրոցական երեխաների համար 8 պարապմունքներից բաղկացած ծրագիրը նպաստում է շրջապատում առկա երևույթների մասին կարծիքի ձևավորմանը, դրանց ճիշտ ընկալմանն ու վերարտադրմանը: Ընտրության կարգով ծրագրում ներառվում են շփման դժվարություններ ունեցող և սոցիալապես անապահով ընտանիքի կարգավիճակում գտնվող երեխաներ:

Ծրագիրը նպաստում է երեխաների ընդհանուր զարգացմանը, հաղորդում է նրանց հասակակիցների և մեծահասակների հետ շփվելու հմտություններ, դարձնում է ավելի համարձակ, զարգացնում է հանդուրժողականությունը և խթանում է խնդիրներին կառուցողական մոտեցումներ ցուցաբերելու ընդունակությունը:

Ծրագիրն իրականացվել է ՀՀ Տավուշի մարզի Իջևան և Բերդ համայնքներում: Ծրագրում ընդգրկվել է մոտ 230 աշակերտ: Ծրագրին մասնակցելու հնարավորություն են ունեցել նաև Լեռնային Ղարաբաղի տեղափոխված երեխաները:

### Վարսահարդարման ծառայություններ միայնակ տարեցների

Ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ կամավորները, որոնք նաև մասնագիտությամբ վարսահարդարներ են, իրականացնում են տնայցեր և մատուցում մազերի հարդարման ծառայություններ միայնակ, անապահով, անժառանգ այն տարեցների շրջանում, ովքեր ի վիճակի չեն տևից դուրս գալու և հնարավորություն չունեն մազերի հարդարման համար այցելել վարսավիրանոցներ: Այս ծրագիրն իրականացվել է ՀՀ Տավուշի մարզի Բերդ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր և ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի, Սիսիան, Կապան ու Գորիս համայնքներում: Ծրագրում ընդգրկվել են շուրջ 10 կամավորներ և ծառայությունից օգտվել են 413 շահառուներ:

### Արհեստագործական հմտությունների ուսուցանում խոցելի խմբերին

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան և Վարդենիս, ՀՀ Սյունիքի մարզի Կապան, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան և Նոյեմբերյան համայնքներում սոցիալապես խոցելի ընտանիքների կանանց և երեխաների համար իրականացվել են արհեստագործական հմտությունների ուսուցման մի շարք ծրագրեր՝ կարուճակի և շուղագործության դասընթացներից բաղկացած: Ծրագրի շահառուներին տրամադրվել են գործիքներ և նյութեր: Ծրագրից օգտվել է 15 երեխա և 67 կին:

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ



70  
ԿԱՍՏՎՈՐ



1000  
ՇԱՀԱՌՈՒ



300  
ԼՈՒՍԱԲԱՆՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ



1373  
ՍՆՆԴԻ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ ՓԱԹԵԹՆԵՐ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ



245  
ԿԱՍՏՎՈՐ



3000  
ՇԱՀԱՌՈՒ



360  
ԼՈՒՍԱԲԱՆՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ



5414  
ՍՆՆԴԻ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ ՓԱԹԵԹՆԵՐ

## ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ



3700  
ԿԱՍՏՎՈՐ



10000  
ՇԱՀԱՌՈՒ



815  
ԼՈՒՍԱԲԱՆՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ



33923  
ՍՆՆԴԻ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ ՓԱԹԵԹՆԵՐ



**Արարատի, Արագածոտնի, Կոտայքի և Տավուշի մարզային մասնաճյուղերի կարողությունների զարգացում՝ սննդի աշակցման ծրագրի միջոցով**

Շվեյցարական ԿԻ կողմից ֆինանսավորված մարզային մասնաճյուղերի զարգացման ծրագրերի շրջանակներում, բարելավվել են մասնաճյուղերի կարիքների գնահատման, խնդիրներին արձագանքման և ծրագրերի կառավարման կարողությունները: Ծրագրի շրջանակներում շարունակվել է ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքում բարեգործական ճաշարանի գործարկումը՝ շաբաթական 3 անգամ տաք ճաշ տրամադրելով 110 միայնակ տարեցներին: Այլ մարզերում ամսական սննդի փաթեթներ են տրամադրվել ընդհանուր 815 խոցելի տարեցներին և ամեն եռամսյակ տրամադրվել են հիգիենիկ փաթեթներ: Ծրագրի շահառուների համար կամավորները կազմակերպել են սոցիալականացման միջոցառումներ, իսկ ծննդյան օրերին՝ շնորհավորել և հանձնել նվերներ:

**ՇԻՐԱԿԻ**  
ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

-  **172**  
ԿԱՄՎՈՐ
-  **350**  
ԵԱԳՍՈՒՐ
-  **2300**  
ԼՈՒՍԱԲԱՆԿԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ
-  **5467**  
ՍՆՆԻՐ ԵՎ ԳԻԳԻԵՆԻԿ ՓԱԹԵԹՆԵՐ

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ**  
ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

-  **245**  
ԿԱՄՎՈՐ
-  **4207**  
ԵԱԳՍՈՒՐ
-  **200**  
ԼՈՒՍԱԲԱՆԿԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ
-  **13708**  
ՍՆՆԻՐ ԵՎ ԳԻԳԻԵՆԻԿ ՓԱԹԵԹՆԵՐ

**ԼՈՒՌԻ**  
ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

-  **130**  
ԿԱՄՎՈՐ
-  **15000**  
ԵԱԳՍՈՒՐ
-  **2000**  
ԼՈՒՍԱԲԱՆԿԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ
-  **5585**  
ՍՆՆԻՐ ԵՎ ԳԻԳԻԵՆԻԿ ՓԱԹԵԹՆԵՐ

Ծրագիրը նաև անձնակազմի և կամավորների կարողությունների զարգացման բաղադրիչ ունեն, ինչի շրջանակներում ներգավված անձնակազմն ու կամավորները մասնակցել են ծրագրերի կառավարման, ռեսուրսների հայթայթման, տարեցների խնամքի առանձնահատկությունների վերաբերյալ դասընթացների:

### Ինստիտուցիոնալ զարգացում

2021թ. ՅԿԽԸ-ը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և Կարմիր խաչի/Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի հետ համագործակցությամբ, մեկնարկեց կազմակերպության զարգացման լայնամասշտաբ ծրագիր. կազմվեց զարգացման եռամյա պլան և իրականացվեց զարգացման առաջնահերթ խնդիրների արձագանքումը: Ծրագրի հիմքն էր հանդիսանում ինստիտուցիոնալ զարգացման հավասար հնարավորությունների ապահովումը բոլոր մարզային մասնաճյուղերի համար: Բոլոր մարզային մասնաճյուղերում իրականացվել են նյութական և մարդկային կարողությունների հզորացման միջոցառումներ: Ծրագրով նախանշված գործողությունների արդյունքում ՅԿԽԸ Արարատի, Կոտայքի, Արմավիրի և Արագածոտնի մարզային մասնաճյուղերը համալրվել են անհրաժեշտ համակարգչային տեխնիկայով և կահավորանքով, ինչպես նաև մասնաճյուղերին տրամադրվել են ավտոմեքենաներ՝ դժվար հասանելի տեղանքներում մարդասիրական գործունեության իրականացումը հեշտացնելու նպատակով: Աշխատակիցների և կամավորների համար մի շարք միջոցառումներ են կազմակերպվել (դասընթացներ, կլոր սեղան հանդիպումներ/քննարկումներ), որի նպատակն էր ամրապնդել և բարելավել վերջիններիս փափուկ/կոշտ հմտություններն ու կարողունակությունները (կոմպետենցիաները) իրականացվող ծրագրերի արդյունավետ կառավարման, ներկայացման, մոնիթորինգի և հաշվետվողականության ուղղությամբ: Իսկ համայնքներում իրականացված դրամաշնորհային փոքր նախաձեռնությունների իրականացում ամրապնդեցին անձնակազմի և կամավորների ձեռք բերած գիտելիքները՝ կարիքների վերհանման և արձագանքման ուղղությամբ:

Տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ շուրջ 500 կամավորների համար՝ Առաջին օգնության, Արտակարգ իրավիճակներին արձագանքման, ընտանեկան կապերի վերականգնման, Երեխաների և տարեցների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:

ԿԽՄՖ հետ համագործակցությամբ իրականացվեց 470 կամավորների ապահովագրումը՝ դժբախտ պատահարներից, ինչպես նաև աշխատակազմն ու բոլոր կամավորները ապահովագրվեցին ԶՈՎԻԴ-19 վարակի դեպքերից:

2021թ. հուլիսի 8-9-ին Գյումրիում և դեկտեմբերի 2-3-ին Եղեգնաձորում կազմակերպվեցին համաժողովներ՝ ՅԿԽԸ ղեկավարության և բոլոր մարզային մասնաճյուղերի ղեկավար կազմի մասնակցությամբ: Համաժողովների ընթացքում ամփոփվեցին անցած տարվա գործունեությունը, նվաճումներն ու մարտահրավերները: Համաժողովներին հաջորդեցին աշխատակիցների և կամավորների համար դասընթացներ և աշխատարաններ:

## ԿՈՏԱՅՔԻ

ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ



**90**  
ԿԱՍԱՎՈՐ



**159**  
ՇԱՅԱՌՈՐ



**50**  
ԼՈՒՍԱԲԱՆՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ



**24513**  
ՍՆՆԴԻ ԵՎ ԳԻԳԵՆԻԿ ՓԱԵԹԵԹՆԵՐ

## ԱՍՏՓԱՆԱՎԱՆԻ

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ



**213**  
ԿԱՍԱՎՈՐ



**517**  
ՇԱՅԱՌՈՐ



**355**  
ԼՈՒՍԱԲԱՆՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ



**223**  
ՍՆՆԴԻ ԵՎ ԳԻԳԵՆԻԿ ՓԱԵԹԵԹՆԵՐ

## ԱՐԱՐԱՏԻ

ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ



**500**  
ԿԱՍԱՎՈՐ



**110**  
ՇԱՅԱՌՈՐ



**200**  
ԼՈՒՍԱԲԱՆՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ



**23732**  
ՍՆՆԴԻ ԵՎ ԳԻԳԵՆԻԿ ՓԱԵԹԵԹՆԵՐ





Ազգային ընկերության կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Կոտայքի, Սյունիքի ՄՄ գործադիր տնօրենների, կամավորների պատասխանատուների և կամավորների համար իրականացվեց ծրագիր-առաջարկի մշակմանն ուղղված դասընթացների շարք, որի նպատակն է ՄՄ կարողությունների զարգացումը՝ համայնքային կարիքների կնահատման, արձագանքման համատեքստում:

Դասընթացաչարի ընթացքում մասնակիցները սովորեցին համայնքի քարտեզագրման, ծրագիր-առաջարկի մշակման մասին: Դասընթացների ավարտին մասնակիցները ներկայացրին իրենց մշակած համայնքային նախաձեռնությունները, որոնցից լավագույն 5-ը ստացան ֆինանսավորում՝ գաղափարները մարզերում իրականացնելու համար:

Տարեվերջին, կամավորների միջազգային օրվան նվիրված միջոցառումներ կազմակերպվեցին բոլոր մարզերում. ամփոփվեց կամավորական տարին և ակտիվ կամավորները խրախուսվեցին:

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ



Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իր գործունեության ընթացքում մշտապես համագործակցում է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (ԿԽ և ԿՄ) միջազգային շարժման բոլոր բաղկացուցիչների, Կառավարության, միջազգային և տեղական՝ մասնավոր ու հասարակական կազմակերպությունների հետ:



**Հայաստան էր ժամանել Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Ջագան Չափազայնը**

Դեկտեմբերի 9-10-ը տարածաըրջանային աշխատանքային այցի շրջանակներում Հայաստան էր ժամանել Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի (ԿԻՄՖ) գլխավոր քարտուղար Ջագան Չափազայնը: Դեկտեմբերի 9-ին, ԿԻՄՖ գլխավոր քարտուղարն այցելեց Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) գրասենյակ՝ քննարկելու համատեղ իրականացվող ծրագրերը և համագործակցության հետագա պլանները:

- Ուրախ եմ տեղում տեսնելու, թե ինչպես է Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացնում իր մարդասիրական աջակցությունը, և թե ինչպես ենք միասին աշխատում՝ հասնելու ԿԻՄՖ-ի Նորացման օրակարգին: Ես շատ եմ հպարտանում Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորներով: Նրանք այնքան մեծ դիմակայունություն են ցուցաբերել ճգնաժամերի ընթացքում խոցելի համայնքներին աջակցելիս, - ասաց պարոն Չափազայնը:

ՀԿԽԸ գրասենյակում ԿԽՄՖ գլխավոր քարտուղարի գլխավորած պատվիրակությանն իր կատարմամբ դիմավորեց «Փարոս» կամերային երգչախումբը: ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը ողջունեց հյուրերին՝ նվիրելով ՀԿԽԸ 100-ամյակին նվիրված հուշամեդալը և «Հարյուր տարվա մարդասիրություն» գիրքը:

- Մեր համագործակցությունը ավելի քան 30 տարվա պատմություն ունի և սկսվել է 1988 թվականի ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո: Շնորհակալ ենք այս տարիների ընթացքում Միջազգային ֆեդերացիայի համագործակցության և աջակցության համար, որի շնորհիվ կարողացել ենք իրականացնել ամենատարբեր լայնածավալ ծրագրեր և աջակցել հազարավոր խոցելի մարդկանց, - նշեց ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը:

ԿԽՄՖ գլխավոր քարտուղարը և ՀԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանն աշխատանքային քննարկումներ ունեցան՝ Հայկական Կարմիր խաչի ընկերության և ԿԽՄՖ համագործակցության և հետագա ծրագրերի վերաբերյալ: ՀԿԽԸ գլխավոր քարտուղարը ներկայացրեց գործունեության հիմնական ուղղությունները և հատկապես վերջին երկու տարիների մարտահրավերներն ու դրանք հաղթահարելու ուղղությամբ գործադրվող ջանքերը: Բարձրաստիճան հյուրը բարձր գնահատեց Ազգային ընկերության կողմից իրականացվող ծրագրերի որակն ու արդյունավետությունը և վստահություն հայտնեց, որ համագործակցությունը շարունակական կլինի:

**Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման գործընկերների և միջազգային ու տեղական կազմակերպությունների կողմից ավելի քան 5 մլրդ. 123 մլն. 338 հազար ՀՀ դրամ է (10 671 621 ԱՄՆ դոլար) տրամադրվել Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ մարդկանց ամենահրատապ ու անհետաձգելի կարիքներին արձագանքելու համար:**

ԿԽՄՖ ղեկավարը ներկա գտնվեց Կառավարության մեծ դահլիճի նախասրահում ՀԿԽԸ կամավորական ներուժով իրականացվող գործունեության ցուցահանդեսին՝ ծանոթացավ կամավորական ծրագրերին և գործունեությանը: ՀԿԽԸ և ԿԽՄՖ գլխավոր քարտուղարները միասին շնորհավորեցին կամավորներին՝ Կամավորների միջազգային օրվա կապակցությամբ:

Դեկտեմբերի 10-ին պարոն Ջագան Չափագայնը և ՀԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը մեկնեցին Շիրակի մարզ, որտեղ այցելեցին ՀԿԽԸ Շիրակի մարզային մասնաճյուղ, ՀԿԽԸ Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոն, մասնակցեցին Առաջին օգնության և փրկարարական աշխատանքների ցուցադրական վարժանքի, հանդիպեցին ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի հետ:

Այցի ընթացքում ԿԽՄՖ գլխավոր քարտուղարը Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) ղեկավարության հետ միասին հանդիպեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հետ:

Մի շարք գործընկեր Ազգային ընկերություններ՝ Շվեյցարական, Ավստրիական, Մոնակոյի, Գերմանական, Դանիական Կարմիր խաչերը և Իրանական Կարմիր մահիկը, ԿԽԿՄՄՖ և ԿԽՄԿ աջակցել են Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ Դարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով տեղահանվածների կարիքներին արձագանքելու նպատակով: Նշված գործընկերների հետ տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ և քննարկումներ՝ ներկայացնելու կատարված աշխատանքը և կարիքները, այդ թվում տեղի են ունեցել առցանց հանդիպումներ՝ կորոնավիրուսի համավարակի սահմանափակումներով պայմանավորված:



Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման գործընկերների և միջազգային ու տեղական կազմակերպությունների կողմից ավելի քան 5 մլրդ. 123 մլն. 338 հազար ՀՀ դրամ է (10 671 621 ԱՄՆ դոլար) տրամադրվել Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ մարդկանց ամենահրատապ ու անհետաձգելի կարիքներին արձագանքելու համար

Իրանական Կարմիր մահիկի աջակցության շրջանակներում, Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կենտրոնական գրասենյակ էր այցելել ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության փոխդեսպան պարոն Ալի Մոհամադ Մոթաղին, որին ընդունեց ՀԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը:

Իրանի Կարմիր մահիկը մարդասիրական օգնություն է տրամադրել Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով տեղահանված անձանց աջակցելու նպատակով: Օգնությունը ներառում է 1600 ծածկոց, խոհանոցային պարագաների 400 հավաքածու և մոտ 15 000 միավոր բժշակական պարագա, որոնք փոխանցվելու են Այրվածքաբանության ազգային կենտրոնին:



ՅԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը ելույթ ունեցավ «Սպիտակի երկրաշարժի պատմական դասերը» գիտաժողովին՝ ներկայացնելով Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման արձագանքը երկրաշարժին: Գիտաժողովը կազմակերպել էր Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնը՝ ՀՀ ԱԻՆ-ի հետ համագործակցությամբ:

- Մենք շնորհակալ ենք գործընկեր Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությանը՝ համագործակցության և Ազգային ընկերությանը՝ ցուցաբերած աջակցության համար: Իրանի Կարմիր մահիկի հետ մեր համագործակցությունը երկար տարիների պատմություն ունի, և վստահ եմ, որ ապագայում էլ կհամագործակցենք՝ ի շահ խոցելի խմբերի բարօրության, - ողջունելով հյուրերին ասաց տիկին Աննա Եղիազարյանը:

Հայաստանի Հանրապետությունում ԻԻՀ փոխդեսպան պարոն Մոթադին հիշատակելով Իրան-Հայաստան բարեկամական հարաբերությունների մասին, այդ թվում՝ կողմերի համագործակցությունը ծանր իրավիճակներում, որին բախվել են երկու երկրները, իր կարեկցանքը հայտնեց Ղարաբաղյան հակամարտության վերջին սրացման ընթացքում տուժածներին և, բարձր գնահատելով Հայկական Կարմիր խաչի ընկերության ջանքերը՝ պատերազմի հետևանքով մոտ հարյուր հազար տեղահանվածներին աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ, հաջողություն մաղթեց՝ սրացման հետևանքով տուժածներին օգնելու, ինչպես նաև մարդասիրական այլ խնդիրներ լուծելու համար:

Անդրադառնալով անցյալ տարվա ծանր պայմաններում երկու երկրների համագործակցության շարունակականը՝ փոխդեսպանը հույս հայտնեց, որ Իրանի Իսլամական Հանրապետության Կարմիր մահիկի և Հայկական Կարմիր խաչի ընկերության միջև բարեկամական համագործակցությունն էլ ավելի կընդլայնվի:

Հայկական Կարմիր խաչի ընկերության ղեկավարությունը հիանալի հնարավորություն ունեցավ հանդիպելու ԿԽՄԿ փոխնախագահ Ժիլ Կարբոնյեի հետ, որ աշխատանքային այցով ժամանել էր Հայաստան: Քննարկվեցին համատեղ հետաքրքրության շրջանակները, համագործակցությունը, երկրում առկա մարտահրավերներն, դրանց արձագանքը և հետագա պլանները:

ՀԿԽԸ պատվիրակությունը՝ Գլխավոր քարտուղարի գլխավորությամբ, աշխատանքային այցով մեկնեց Վիեննա, որտեղ տեղի ունեցավ հանդիպում Ավստրիական Կարմիր խաչի Գլխավոր քարտուղարի և Միջազգային համագործակցության բաժնի ղեկավարի հետ: Քննարկվեցին համագործակցության եզրերը, առկա համագործակցությունն ու ապագա համատեղ պլանները: Երկու կողմերի կողմից մեկ անգամ ևս շեշտվեց համագործակցության կարևորությունն՝ ի բարօրություն խոցելի համայնքների ու խմբերի և դրա շարունակականության կարևորությունը:

**ՀԿԽԸ-ն մի շարք միջազգային ցանցերի և աշխատանքային խմբերի անդամ է, ինչպիսիք են՝ Փախստականների, ապաստան հայցողների և միգրանտների հարցերով Եվրոպական Կարմիր խաչի ընկերությունների համագործակցության հարթակը, Եվրոպական Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների սոցիալ-հոգեբանական աջակցության ցանցը, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի երիտասարդական հանձնաժողովը, հատուկ կարիքներով Փախստականների կարիքների գնահատման ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի աշխատանքային խումբը, Առաջին օգնության Եվրոպական Խորհրդատվական Կենտրոնը, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի Եվրոպական համակարգման կոմիտեն, ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողով (ՄՀՀ): Եվրոպական Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և Տուբերկուլյոզի համացանցը, Կամավորության զարգացման Եվրոպական ցանցը, Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովը, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհուրդը, Տարեցների սոցիալական պաշտպանության և խնամքի տրամադրման հինախընդիրներով զբաղվող կառույցների ցանցը, ՄԱԿ-ի Աղետների կառավարման երկրի թիմը, ԱՌՆԱՊ-ը:**

# ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՔԻԼԻԶԱՑՈՒՄ



2021 թվականին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը շարունակել է Ռեսուրսների հայթայթման գործընթացը՝ մինևույն ժամանակ աշխատելով այս ուղղությամբ կազմակերպության կարողությունների զարգացման վրա:



Տարվա սկզբին իրականացվեց հետազոտություն՝ Առաջին օգնության և Քայմատանում երեխաների խնամքի և զարգացման կենտրոնի ուղղություններով բիզնես հնարավորությունների վերաբերյալ:  
Այս հետազոտությունների արդյունքում կազմվել է ռազմավարության և ներդրումային պլան:

Հաջորդ ձեռքբերումը ՀԿԽԸ-ի անձնակազմի մասնակցությունն էր Redpreneur դասընթացին, որը ֆինանսավորվում էր Ավստրիայի զարգացման գործակալության կողմից և Վիեննայի Իմփաքթ Հաբի նախաձեռնությամբ՝ Ավստրիական Կարմիր խաչի աջակցությամբ, որտեղ ներկայացվել էր 3 բիզնես գաղափար, որոնց հիման վրա մասնակիցները սովորեցին մշակել բիզնես պլաններ:

Ծրագրի կառավարում և ռեսուրսների հայթայթում թեմայով դասընթաց կազմակերպվեց ՀԿԽԸ-ի մարզային մասնաճյուղերի ներկայացուցիչների համար՝ ներառյալ մասնաճյուղի անձնակազմը և կամավորները: Դասընթացը ինտերակտիվ էր՝ ներառում էր աշխատախմբերի գործնական աշխատանք և քննարկումներ: Հիմնական թեման էր՝ ինչպես դրամահավաք կազմակերպել ծրագրերի համար, փոխշահավետ առաջարկներ անելը և հնարավոր գործընկերների հետ շփվել:

Կարևոր քայլ էր նաև CRM-ում նվիրատուների տվյալների շտեմարանի վերանորոգումն ու թարմացումը: Այժմ, նվիրատուների հետ բարելավված հաղորդակցության կողքին, կայքում ստեղծվել է կամավորների առցանց գրանցման հնարավորություն, ինչը հեշտացրել է գրանցման գործընթացը: Այժմ կամավորների առցանց շտեմարանը ստեղծվում է ավտոմատ կերպով:

NSIA Bridge դրամաշնորհի շրջանակներում և լրատվական և լուսաբանման բաժնի հետ համագործակցությամբ մենք ունեցանք առցանց դրամահավաքի համար նախատեսված նոր գործիքներ, սոցիալական տեսահոլովակ երկու լեզուներով՝ հայերեն և անգլերեն:

Մարզերի հետ համատեղ աշխատանքի շնորհիվ համայնքային դրամահավաքի ոլորտում հանգանակության արկղերի թիվը աճեց և այժմ ունենք 75 տեղադրված արկղ ՀՀ ողջ տարածքում: 2021 թվականին հանգանակության արկղերից հավաքվել է ավելի քան 4.500.000 ՀՀ դրամ: Ամանորյա տոներին ընդառաջ այդ գումարը ուղղորդվել է անապահով և ծայրահեղ կարիքավոր ընտանիքներին սնունդ և անհրաժեշտ իրեր բաշխելու համար: 2021 թվականին Easy Pay տերմինալների միջոցով ՀԿԽԸ-ը հավաքել է 4.267.400 դրամ: Կորպորատիվ հատվածի հետ համագործակցության շնորհիվ բնափրային նվիրատվությունների թիվը կտրուկ աճել է:

**Էստինգ ՍՊԸ-ն** Երևանի մանկատան և տարեցների խնամքի կենտրոնի համար ՀԿԽԸ-ին տրամադրել է 3000 հատ հակասեպտիկ՝ 2.610.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Ավելի քան 700.000 դրամ նվիրաբերվել է «Վաթերլոք» ՍՊԸ-ն՝ աղբյուրի ջուր ապահովելով: 73.000 ՀՀ դրամի աջակցություն է նաև Բեյսիկ Զորփորեյշն ՍՊԸ:

**Համով Կաթ ՍՊԸ-ն** նվիրաբերել է կաթնամթերք 290.000 ՀՀ դրամին համարժեք:

**Ամկորը** նույնպես տրամադրել է 1.016.000 ՀՀ դրամի կաթնամթերք:

**Խաս-Խազ ՍՊԸ-ի** հետ համագործակցությունը տվել է 1.460.000 ՀՀ դրամ:

**Հայաստան** համահայկական հիմնադրամը նվիրաբերել է 11.600.000 ՀՀ դրամ:

**ՄԱԿ ՓԳՀ-ն** նվիրաբերվել է ավելի քան 440.000.000 դրամ՝ տարբեր բնափրային ապրանքների տեսքով:

Իտալական Կարմիր խաչի և ԿԽՄՖ-ի աջակցությամբ իրականացվել է «Ազգային ընկերության թվային դրամահավաքի կարողությունների զարգացում» ծրագիրը:

# ԳՐԱՑԻԱ

## ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆՁՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնում իրականացվում է ողնուղեղի, ողնաշարի, հենաշարժական ապարատի հիվանդությունների բուժում, ընդհանուր և հետվնասվածքային վերականգնում, սոցիալ-հոգեբանական վերականգնում:

Ողնուղեղի և ողնաշարի վնասվածքով յուրաքանչյուր հիվանդի հետ աշխատում է առանձին բժիշկ, բուժքույր, վերականգնող թերապիստ, հոգեբան և սպորտային մարզիչ:

Կենտրոնն ունի ընդլայնված ստացիոնար և ամբուլատոր բժշկական ծառայություններ՝ ախտորոշում, ջրաբուժություն, ջրային մերսում, ցեխաբուժություն/տորֆաբուժություն, կինեզոթերապիա, ֆիզիոթերապևտիկ բուժում, բուժական և դասական մերսում, էլեկտրաթերապիա, ինհալացիոն բուժումներ, սպորտային համալիր, սթրեսուլոգի կաբինետ, ՍԿԵՆԱՌ բաժանմունք,

Կենտրոնի գործունեության ընթացքում արդեն բուժվել և իրենց առողջությունն են վերականգնել մոտ 14 000 հիվանդ ՅՅ-ից, ԱՊՅ-ից, Եվրոպայից և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներից: 2021թ. պետպատվերի շրջանակներում բուժում է ստացել 855 հիվանդ, Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով վիրավորված 118 հիվանդ:

Կենտրոնը գլխավորում է բժիշկ և ադմինիստատոր Ալեքսանդր Մնացականյանը:



# ANNUAL REPORT

# 2021

# FUNDAMENTAL PRINCIPLES OF THE INTERNATIONAL RED CROSS AND RED CRESCENT MOVEMENT

## **HUMANITY**

The International Red Cross and Red Crescent Movement, a desire to bring assistance without discrimination to the wounded on the battlefield, endeavors, in its international and national capacity, to prevent and alleviate human suffering wherever it may be found. Its purpose is to protect life and health and to ensure respect for the human being. It promotes mutual understanding, friendship, cooperation and lasting peace amongst all peoples.

## **IMPARTIALITY**

It makes no discrimination as to nationality, race, religious beliefs, class or political opinions. It endeavors to relieve the suffering of individuals, being guided solely by their needs, and to give priority to the most urgent cases of distress.

## **NEUTRALITY**

In order to continue to enjoy the confidence of all, the Movement may not take sides in hostilities or engage at any time in controversies of a political, racial, religious or ideological nature.

## **INDEPENDENCE**

The Movement is independent. The National Societies, while auxiliaries in the humanitarian services of their governments and subject to the laws of their respective countries, must always maintain their autonomy so that they may be able at all times to act in accordance with the principles of the Movement.

## **VOLUNTARY SERVICE**

It is a voluntary relief movement not prompted in any manner by desire for gain.

## **UNITY**

There can be only one Red Cross or one Red Crescent Society in any one country. It must be open to all. It must carry on its humanitarian work throughout its territory.

## **UNIVERSALITY**

The International Red Cross and Red Crescent Movement, in which all Societies have equal status and share equal responsibilities and duties in helping each other, is worldwide.

**According to its 2011-2020 Strategy, Armenian Red Cross Society is guided by the following values:**

### **People**

We build the capacities of people and communities to work in solidarity to find sustainable solutions for their most pressing needs and vulnerabilities.

### **Integrity**

We work in accordance with our Fundamental Principles in a transparent and accountable manner.

### **Partnership**

As members of the International Red Cross and Red Crescent Movement, we cooperate with government and with other local and international organizations without compromising our emblems and the independence, impartiality and neutrality represented.

### **Diversity**

We respect the diversity of the communities we work with and of our volunteers, members and staff, based on non-discrimination and our principles of impartiality, unity and universality.

### **Leadership**

We show leadership and strive for excellence in our work, drawing attention to the rights, needs and vulnerabilities of communities and factors that underline them.

### **Innovation**

We draw inspiration from our shared history and tradition but are equally committed to finding creative, sustainable solutions to problems that threaten human well-being and dignity in a changing world.

**WE WORK IN THE  
FOLLOWING STRATEGIC  
DIRECTIONS:**

**DISASTER MANAGEMENT  
POPULATION MOVEMENT  
TRACING SERVICE  
FIRST AID  
SOCIAL SUPPORT AND HEALTHCARE  
YOUTH, VOLUNTEERING AND MEMBERSHIP  
DISSEMINATION OF HUMANITARIAN VALUES  
INTERNATIONAL COOPERATION  
ORGANIZATIONAL DEVELOPMENT  
RESOURCE MOBILIZATION**

# DISASTER MANAGEMENT



**The aim of Disaster Management (DM) direction is to reduce the vulnerability and increase the resilience of the population towards natural and man-made disasters through disaster risk reduction on a community level and strengthen Disaster Preparedness and Response structure of the Armenian Red Cross Society (ARCS).**



### **Strengthening civil protection systems through volunteer capacities**

